



ՍԴՀԿ Ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան. «Սահմաններու Ապահովութեան Միակ Երաշխիքը Հայկական Հզօր Եւ Մարտունակ Բանակի Ներկայութիւնն է»

Գնահատելով վերջին շրջանին տեղի ունեցող Հայ-ատրպէյճանական բախումները, ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Յակոբ Տիգրանեան հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց, որ Ատրպէյճան կը միտէր սահմանները թէժացնել եւ աստիճանաբար սրելով իրավիճակը, Լեռնային Ղարաբաղի հարցին մէջ առաւելութիւններ եւ նախաձեռնողի դիրք ձեռք բերել: «Պէտք է ընդունիլ, որ այս լարուածութիւններն ու բախումները ամիսներէ ի վեր կան, պարզապէս վերջին շաբաթներուն սաստկացան եւ հայկական կողմը պարտադրուած լիարժէք պատասխաններ տուաւ», ըսաւ Ընկ. Յակոբեան աւելցնելով, «Հայ ժողովուրդը խաղաղասէր է եւ կողմնակից՝ բանակցութիւններու միջոցաւ լուծումներ գտնելուն: Ատրպէյճանի իշխանութեան համար առնուազն միամտութիւն է հաւատալ, որ զէնքի ուժով կարելի է լուծումի հասնիլ»:



ՍԴՀԿ ատենապետ
Ընկ. Յակոբ Տիգրանեան

բուռնցք: Բոլորս պետք է աչալը-ջօրէն հետեւինք զարգացումներուն եւ միասնականօրէն դիմագրաւենք ներկայ հանգրուանը: Երկրորդ Հայաստանի դիւանագիտական կառուցը պէտք է աւելի աշխույժ գործունէութիւն ծաւալէ: Մենք պարտաւոր ենք միջազգային հանրութեան ուշադրութեան ներկայացնել Ազգերիական բոլոր սպառնալիքներն ու ոտնձգութիւնները»:

Սոչիի մէջ կայացած հանդիպումի մասին խօսելով կուսակցութեան ատենապետը ըսաւ, «Հանդիպումները կը միտէին լարուածութիւնները որոշ չափով մեղմացնել եւ երկխօսութեան նոր էջ բանալ: Հակառակ Ատրպէյճանի կողմէ շարունակուող սպառնալիքներուն, գեանի վրայ հանդարտութիւնը զգալիօրէն վերականգն-

Շաբ.ը էջ 5

Սոչիի Մէջ Կայացած Հանդիպումն Ետք Սարգսեան Եւ Ալիեւ Յոյս Յայտնեցին՝ Խաղաղ Լուծում Գտնել Ղարաբաղեան Հարցին



Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները, Սոչիի հանդիպումն ընթացքին

Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներ՝ Սերժ Սարգսեան ու Իլհամ Ալիեւ Օգոստոս 9-ին Սոչիի մէջ, Ռուսաստանի նախագահ վրաստիմիր Փութինի միջնորդութեամբ կայացած եռակողմ հանդիպման ժամանակ յոյս յայտնած են, որ մօտ ապագային կարելի կ'ըլլայ զարգացնել հակամարտութիւնը լուծել փոխզիջումներու միջոցաւ: «Ռուսաստանը, որպէս մեր մերձակոր բարեկամ, գործընկեր եւ հարեւան, առանձնապատուկ դերակատարութիւն ունի հակամարտութեան կարգաւորման գործին մէջ. յոյս ունինք, որ մօտ ապագային բանակցութիւններու միջոցաւ, խաղաղ ճանապարհով կը գտնենք լուծում, որ կը համապատասխանէ միջազգային իրաւունքի սկզբունքներուն, ինչպէս նաեւ արդարացի կ'ըլլայ», - յայտարարած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ, յոյս յայտնելով, որ Փութինի անձնական ներգրաւուածութիւնը «նոր

շունչ կը հաղորդէ բանակցային գործընթացին»:

Իր հերթին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան կարծիք յայտնած է, որ՝ «հակամարտութիւնը հարկաւոր է լուծել փոխզիջումային ճանապարհով, եւ ԱՀԿ Միսկի խմբի համանախագահների առաջարկած սկզբունքների հիման վրայ»: Ան աւելցրեցած է, որ «հակամարտութիւնը ռազմական լուծում չունի»:

Ալիեւը նաեւ յիշեցրեցած է, որ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը չորս բանաձեւ ընդունած է, որոնք, իր ձեւակերպմամբ՝ «կը պահանջեն հայկական զրաւող ուժերը անմիջապէս դուրս բերել Ատրպէյճանի տարածքէն, եւ որոնք քսան տարուայ ընթացքին մնացին թուղթի վրայ»:

Սերժ Սարգսեան Ալիեւի այս խօսքին հակադարձած է՝ հարցնե-

Շաբ.ը էջ 4

Թրքահայ մտաւորականները ընդվզում յայտնեցին Երտողանին

Թրքահայ մտաւորականներ իրենց ընդվզումը արտայայտեցին Թուրքիոյ վարչապետ Ռէճեփ Էրտողանի արտասանած այն խօսքերուն համար, որ ան արդասանած է հեռուստահարդրումի մը ընթացքին ըսելով, «Օրինակ ինձի համար ինչեր ըսին, մէկը ելաւ վրացի է ըսաւ, ուրիշ մը ելաւ, շատ աւելի տգեղ արտայայտուեցաւ, հայ է ըսաւ»:

Աննա Թուրալ, Արատ Տինք, Արտաշէս Մարկոսեան, Արիս Նալճը, Կարօ Փայլան, Յարութիւն Էօզեր, Հայքօ Պաղտատ, Գարին Գարազաշլը, Քենան Ենիճէ, Նազար Պինաթլը, Նազար Պիւլիւմ, Օհանէս Բըրլըտաղը, Ռոպեր Քոփթաշ, Սեպուհ Ասլանկիլի, Շաքէ Եալչըն, Թաթէոս Պէպէք եւ Եդվարդ Տանձիկեան վարչապետի խօսքերուն առթիւ ըրին հետեւեալ յայտարարութիւնը:

«Վաթսուն տարի շարունակ

եւ ստիպողաբար պոռացինք որ թուրք ենք... (կ'ակնարկեն Թուրքիոյ տարածքին բոլոր դպրոցներուն մէջ ամէն առաւօտ կատարուող երգման արարողութեան). այո, կ'ընդունինք որ դու ջնջեցիր այդ արարողութիւնը. մեր պոռացածին մէջ բնաւ «տգեղութիւն» չգտանք. պարզապէս սխալ համարեցինք. երբեք նեղանալով չի ջղայնացանք ա՛յն բանին համար որ կ'ուզէին որ ըլլայինք. մեր ջղայնացածը այդ բանը ըլլալու իրենց պարտադրանքն էր:


Հա՛յ, ազգայնամոլներ, «թուրքի թշնամիներ» բնաւ չունեցա՞նք: Կարելի՞ է որ չ'ըլլայ: Այնքան որքան այլ ազգերու մէջ կայ, նոյնքան ալ մեր մօտ կայ: Սակայն մենք մեր ազգայնամոլները երբեք չպանծացուցինք: «Ասիկա մեր ներ-

Շաբ.ը էջ 4

Ոչ եւս է Երուանդ Պապայեան

Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն է վարչական կազմ, Խոր ցաւով իմացանք երախտաշատ կրթական մշակ, հասարակական գործիչ, գրող եւ հրատարակաւոր՝ Երուանդ պապայեանի մահը, որ պատահած է Չորեքշաբթի 6 Օգոստոս 2014-ին: Ան, իբրեւ տիպար եւ անձնուէր կրթական մշակ, մեծ է եղած իր դաստիարակչական ծառայութիւնը հայ նոր սերունդներու պատրաստութեան երկար, այլ դժուար ճանապարհին: Իր մահով, հայ սփիւռքը կը կորսնցնէ իր արժանաւոր գաւակներէն մին, որուն սիրտը մշտապէս բաբախեց ի սէր հայ մշակոյթի բարգաւաճման, Սփիւռք-Հայրենիք կապերու առաւել սերտացման եւ մեր ազգային պահանջատիրութեան:

Այս տիտղոս առիթով, «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու վարչական անձնակազմս իրենց խորագրաց ցաւակցութիւն-



ները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկ. Ռոպի Պապայեանին, գաւակներ՝ Տէր եւ Տիկ. Տօքթ. Սարգիս եւ Սիլվա Գարայեաններուն, Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Հերմինէ Պապայեաններուն, Տէր եւ Տիկ. Արա եւ Սոնիա Պապայաններուն ու հոգեհարազատ ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչքանով է հնարաւոր պատերազմ՝ Զայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ

ՎԱՐՍԵՆԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ

Ժամանակակից աշխարհում երկրները մրցակցութեան արդիւնքում իրար են բախուում բազմաթիւ նպատակներ, հետաքրքրութիւններ, ինքնութիւններ, արժեհամակարգեր կամ նորմեր, որոնք շատ յաճախ լինում են անհամատեղելի եւ հանգեցնում են հակամարտութիւնների: Ըստ այդմ, առաջանում են տարբեր տեսակի հակամարտութիւններ յաղթահարելու մարտահրաւէրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են համապատասխան գործիքներ: Ցաւօք, այդպիսի հակամարտութիւններից մէկն է Ղարաբաղի հիմնահարցը, որը միջազգային ասպարէզում ռեկորդ է սահմանել՝ իր երկարամեջ ապարդիւն բանակցութիւններով: Այն կոնֆլիկտները, որոնց հիմքում ընկած է հիմնականում յանուն ինքնութեան պայքարը, սովորաբար համարուում են ամենադժուար լուծուող կոնֆլիկտները, քանի որ այդ դէպքում արտաքինից չափազանց դժուար է ազդել կոնֆլիկտային կողմերի պահուածքի վրայ:

Ղարաբաղեան հակամարտութեան դէպքում նոյնպէս թէ՛ Հայաստանը, թէ՛ Ատրպէյճանը, առանց Ղարաբաղի իրենց լիարժէք երկիր չեն համարում, որն էլ հանգեցնում է նրան, որ հակամարտող կողմերը պատրաստ չեն փոխզիջումների, ինչից օգտուում եւ իրենց ձեռքին գործիք են դարձնում արտաքին ակտիւ դերակատարները, ինչպիսին Ռուսաստանն է:

Չի կարելի բացառել, որ սահմանային գոտում արձանագրուած

վերջին լարուածութիւնը պայմանաւորուած է Ռուսաստանի հրահրմամբ, քանի որ վերջինս արտաքին քաղաքականութիւնում կորցրել է իր դերակատարութիւնը, փորձում է վերահաստատուել եւ ցոյց տալ, որ ինքը դեռ ի վիճակի է «լուրջ» խնդիրներ լուծել՝ չնայած Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի կողմից իրականացուած ասնկցիաներին:

Ռուսաստանը փորձում է սիրաշահել Ատրպէյճանին եւ ամէն ինչ անել, որ ներգրաւի նրան Մաքսային Միութիւն, եւ այդ ամէնը, բնականաբար, Ղարաբաղի հարցի «լուծման» հաշուին: Հայաստանը, որը արտաքին քաղաքական ասպարէզում կորցրեց իր դերը՝ կտրուկ ցանկութիւն յայտնելով մտնել Մաքսային Միութիւն, որը մեծ ապտակ էր Արեւմուտքին, կորցրեց վստահութիւնը՝ որպէս լուրջ քաղաքականութիւն վարող երկիր՝ շահաւէտ պայմաններ ստեղծելով Ռուսաստանի պլանները իրագործելու համար:

Սոչիում կայանալիք հանդիպումը երկու երկրների նախագահների միջեւ անհրաժեշտ է աւելի շատ Ռուսաստանին, քան Հայաստանին կամ Ատրպէյճանին, քանի որ որեւէ արդիւնքի կողմերը հաւանաբար չեն համար: Սակայն պէտք է փորձել յուսալ, որ Սոչիի հանդիպման ժամանակ հնարաւոր չի լինի այնպիսի ճնշում գործադրել Հայաստանի վրայ, որի արդիւնքում Ղարաբաղում Ռուսաստանը կը տեղակայի իր խաղաղապահ զօրքերը, քանի որ այնպէս է, թէ դրա արդիւնքում Ռուսաստանը Ատրպէյճանի հետ իր ներքին պայ-

մանաւորուածութեամբ ինչպէս «կը պաշտպանի» տարածքները՝ Ատրպէյճանին իր «հովանու տակ առնելու նպատակով»:

Մեր երաշխիքը մեզ՝ հայերիս համար, պէտք է լինեն միայն մեր աշխարհագրական դիրքը, որը հնարաւորութիւն կը տայ թէկուզ եւ քիչ ռեսուրսներով պաշտպանուել, եւ հիմնական երաշխիքը՝ մեր բանակը, քանի որ ոչ մի խաղաղապահ զօրք երաշխիք չէ կայունութիւն հաստատելու համար, որովհետեւ որեւէ ազգ սրտացաւօրէն չի կարող պայքարել ու կեանքը տալ մի հողի համար, որն իրենը չէ: Անհրաժեշտութեան դէպքում ո՛չ Արեւմուտքն է աջակցելու, ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ այլ երկիր: Դա հնուց եղել է այդպէս, եւ այդպէս էլ կը լինի: Այդ պատճառով չեմ կարծում, որ միշտ պէտք է օգնութիւն ակնկալել դրսից:

Մեր միակ յոյսը պէտք է լինի մեր ամուր բանակը, եւ իհարկէ, անհրաժեշտ է մեր երկրի իշխանութիւնների առանձնապատու ուշադրութիւնը նախկին հերոս ազատամարտիկների եւ ներկայիս իւրաքանչիւր զինուորի հանդէպ՝ հայի մարտական ոգին պահպանելու եւ ոգեւորելու համար, ինչը յաղթանակի հասնելու հիմնական գրաւականներից մէկն է:

Չնայած ներկայիս ակտիւ սահմանային լարուածութեանը, չեմ կարծում, որ Ատրպէյճանը պատերազմ կը սկսի Հայաստանի դէմ: Նա շատ լաւ գիտակցում է, որ պատերազմի միջոցով չի կարող հասնել արդիւնքի, եւ փորձում է ռազմական հետտրութեամբ, սահմանային լարուածութեամբ, Հա-

յաստանի նկատմամբ իրականացուող մեկուսացման քաղաքականութեամբ եւ Ռուսաստանի ճնշման միջոցով հասնել արդիւնքի: Հնարաւոր պատերազմի դէպքում Հայաստանն առանց դժուարութեան կարող է ոչնչացնել արտահանող գազամուղը, որը շատ մեծ հարուած կը լինի ոչ միայն Ատրպէյճանի, այլ նաեւ Արեւմուտքի համար:

Հետեւաբար, Արեւմուտքին նոյնպէս ձեռնտու չէ պատերազմը, եւ կը փորձի կանխել այն: Աշխարհագրական դիրքի առումով էլ ատրպէյճանական բանակի համար չափազանց դժուար է առաջ անցնել՝ չնայած ժամանակակից զէնքերով իր սպառազինութեանը: Այլեւեւ նոյնիսկ չի համարձակուի պատերազմի ժամանակ զէնք տալ իր ժողովրդի ձեռքը, քանի որ այդ զէնքը ներքին բազմաթիւ խնդիրների պատճառով կարող է օգտագործուել իր իսկ դէմ՝ իշխանափոխութեան նպատակով:

Չպէտք է անտեսել այն հանգամանքը, որ Ատրպէյճանը բազմազգ երկիր է, որտեղ դեռ վերջնականապէս չեն լուծուել թալիշները, լեզգիների ընդվզումները, իսկ Հայաստանում նման ներքին վտանգ չկայ: Բայց կարելի է նաեւ նշել, որ սահմանային լարուածութիւնը շահաւէտ է նաեւ ներկայիս մեր իշխանութեան համար, քանի որ դրանով կարողանում է շեղել ժողովրդի ուշադրութիւնը իր իսկ կողմից ստեղծած երկրի թէ՛ ներքին, թէ՛ արտաքին քառային իրավիճակից:

Մեզ անհրաժեշտ է Ղարաբաղի համար պայքարել ոչ միայն Հայաստանում, այլեւ մեր երկրի սահ-

Շաբ.ը էջ 17

Զայական բանակի խոշոր յաջողութիւնը

ՅԱԿՈԲԱՒԱԼԵԱՆ

Սոչիի հանդիպումը հանրութեան շրջանում արժանացել է տարաբնույթ, թէ՛ եւ հիմնականում գրեթէ երկու հակադիր գնահատականի: Հանրութեան մի մասը Սոչին համարում է Սերժ Սարգսեանի դիւանագիտական յաղթանակը, յատկապէս յղում անելով ՄԱԿ բանաձեւերի վերաբերեալ նրա հարցադրմանը՝ ուղղուած Ալիեւին, իսկ հանրութեան մէկ այլ մաս այդ ամէնը համարում է ծիծաղելի ու զաւեշտալի, արձանագրելով, որ իրականում դա շղարշ է, որով իշխանութիւնը փորձում է քողարկել ներքին խնդիրները, որոնք հանդիսանում են Հայաստանը թուլացնող ու վտանգող թիւ մէկ սպառնալիքը եւ որոնց համար գլխաւոր պատասխանատուն Սերժ Սարգսեանն է:

Ինչ է տեղի ունեցել Սոչիում իրականում, ո՞վ է յաջողել այնտեղ, իսկ ով՝ ոչ: Ո՞ւմ յաղթանակն է Սոչին: Կասկած չկայ, որ Ալիեւն էլ Ատրպէյճանում է այն ներկայացնում որպէս իր դիւանագիտական յաջողութիւն: Անկասկած է նաեւ, որ Ատրպէյճանի հանրութեան մի զգալի մասն էլ եթէ ոչ բարձրաձայն, ապա ներքին համոզումով վստահ է, որ Ալիեւը տապալուել է Սոչիում:

Ռուսական քարոզչամիջոցներն էլ Սոչին համարում են իրենց նախագահի յաջողութիւնը, որը ցոյց տուեց հարցեր լուծելու կարողութիւնն ու կովկասը բռնի մէջ պահած ունենալը:

Այդ ամէնի մէջ, ամէն կողմ ունի ճշմարտութեան իր բաժինը, սակայն ամենանշանակալի յաջողութիւն արձանագրողը Սոչիում չի եղել, ու յաջողութիւնն էլ Սոչիում չի եղել:

Սոչիի եռակողմ հանդիպումն ամենայն հաւանականութեամբ ծրագրուել էր որպէս սահմանային լարուածութեան արդիւնք: Բայց Սոչիում երեւի թէ արձանագրուեց հայկական զինուորի սահմանային յաջողութիւնների արդիւնքը:

Եռակողմ հանդիպմանը Սերժ Սարգսեանը, Ալիեւը կամ Պուտինը չեն յաջողութեան հասել, այլ արձանագրուել է հայկական զինուորի յաջողութիւնը՝ որ ունեցել է գիւնուժը սահմանային մարտերի ընթացքում: Բայց ոչ միայն մարտական արդիւնքի, այլ նաեւ ընդհանրապէս ռազմա-քաղաքական պահուածքի, կեցուածքի տեսքով:

Սոչիից առաջ հայկական բանակը յայտարարեց, որ չի ակնկալում սահմանային լարուածութեան եւ միջադէպերի նուազում, ինչն ուղղակի նշանակում էր, որ եթէ Սոչիում կայացուի Հայաստանի շահին եւ ռազմա-քաղաքական ներկայիս ստատուս-քուոյին հակասող որոշում, ապա զինուորն այն չի ընդունելու: Սակայն, խօսքն այստեղ կշիռ էր ստացել իհարկէ դրանից առաջ հակառակորդին դիմադրանող գործողութիւնների շնորհիւ: Այսինքն, բանակի դէպքում ոչ թէ խօսքն էր գործ, այլ գործը տուեց խօսքի հիմք ու կշիռ:

Դա է կշիռ հաղորդել Սոչիում հայկական ներկայութեանը եւ ստի-

պել, որ Ռուսաստանն ու Ադրբեյջանն անցնեն «պլան Բ-ի», այսինքն առնուազն այս փուլում թողնեն շանտաժով ու սպառնալիքով Հայաստանին ու Արցախին գիջում պարտադրելու մտայնացումը: Խնդիրն այստեղ հայկական զինուորի անպարտելիութիւնը չէ: Էյֆորիկ տրամադրութիւնների կարիք չկայ: Աւելին, դրանք նոյնիսկ վտանգաւոր են:

Խնդիրն այլ է՝ հայկական բանակը ցոյց տուեց, որ Հայաստանում կայ ռազմա-քաղաքական գործօն, որն ունակ է տեղի չտալ շանտաժին ու սպառնալիքին: Իսկ դա նշանակում էր, որ էսկալացիան շարունակելու դէպքում բանը կարող էր հասնել լայնամասշտաբ պատերազմի: Իսկ այստեղ արդէն հարցն իսկապէս լրջանում է, որովհետեւ կայ ուղղափառ պատերազմ ՌԴ-ի քթի տակ, կայ Իրանի կովկասի քթի տակ, կայ Թուրքիա, կայ ՆԱՏՕ, բազմաթիւ գործօններ, որոնք արդէն ռազմական գործողութիւնների յետագայ ծաւալումը դարձնում են անկանխատեսելի, հետեւաբար՝ դրանով հանդերձ անցանկալի, աննպատակալարմար:

Սոչիում արձանագրուել է այդ իրողութիւնը, հետեւաբար, խոշոր հաշուով արձանագրուել է հայկական զինուորի յաջողութիւնը՝ Սոչին մեծ հաշուով վերածելով տարածաշրջանային շանտաժի քաղաքականութեան հետեւորդների մեծ անյաջողութեան: Կասկած չկայ, որ յետագայ ժամանակահատուածում

Շաբ.ը էջ 17

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԿ ԶՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOԲԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆՃԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրակոցների թիւը Նուազել է Ղարաբաղա-Ադրբեջանական Սահմանագծում



Հայ զինուորայիններ սահմանային դիրքերէն մէկուկ վրայ

Հայաստանի պաշտպանութեան նախարարի խորհրդական Դաւիթ Զամախեանը այս շաբաթակազբից հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտումների նուազման պատճառներից է համարում Սոչիում կայացած հանդիպումը, ինչպէս նաեւ անցած երկու շաբաթուկայ ընթացքում ադրբեջանական կողմի կրած հսկայական կորուստները. - «Փոխկապակցուած երկու խնդրի կայ: Հայաստանի զինուած ուժերի գերագոյն գլխաւոր հրամանատարը ներկայացաւ յաղթանակով, ամուր թիկունքով, հզոր բանակ, հզոր զինուած ունենալու իրողութեամբ: Եւ բանակցային այդ փոքրիկ գործընթացը մեզ համար շահեկան եղաւ»:

Անդրադառնալով սահմանային վերջին լարուածութեանը՝ պաշտպանութեան նախարարի խորհրդականը նշում է, որ Ադրբեջանն ամէն կարեւոր հանդիպումից առաջ փորձում է յատկապէս իր հանրութեան աչքին ցոյց տալ իր բանակի «հզորութիւնը», բայց ամէն անգամ, ինչպէս եւ այս դէպքում, նրա արկածախնդրութեանը հայկական կողմը արժանի պատասխան տուեց. - «Ձախողուեց այդ նպատակը, որովհետեւ, նախ, կանխատեսելի էր, որ այդպէս է լինելու, եւ մեր Զինուած ուժերը

պատրաստ էին նման գործողութիւնների սցենարին: Երկրորդ կարեւոր հանգամանքը, որ հրադադարի հաստատումից առ այսօր առաջին անգամ է, երբ ադրբեջանական կողմը միաժամանակեայ մեծամասշտաբ կորուստներ կրեց»:

«Սա մեր բանակի փոքր ուժերով մեծ խնդիր լուծելու ռազմավարութեան արդիւնաւէտութեան ներթափանցող ապացոյցն էր», - համոզուած է Զամախեանը: Նա, սակայն, շեշտում է, որ չնայած լարուածութեան նուազմանը, հայկական կողմը զգոնութիւնը չպէտք է կորցնի. - «Իհարկէ, հիմա լարուածութիւնը նուազել է: Թշնամին շատ ցաւոտ հարուած է ստացել, ուշքի գալու խնդիր ունի: Բայց միշտ պէտք է լինել զգոն՝ չիշելով, որ մենք գտնուում ենք հրադադարի պայմաններում, ինչը ոչ թէ խաղաղութիւն է, այլ պատերազմի պասիւփուլ: Բանակը պէտք է զգոն լինի, հասարակութիւնը պէտք է բանակի թիկունքին լինի»:

Հայկական կողմի տուեալներով, վերջին երկու շաբաթուկայ ընթացքում հայկական կողմը 6 զոհ է տուել, ադրբեջանական կողմը՝ առնուազն 8 անգամ ավել: Ադրբեջանական կողմի տուեալներով, սակայն, իրենց զոհերի թիւը երկու տասնեակից պակաս է:

Այս Տարի Մասնաւոր Բուկերն Ունեցել են Ընդամենը 20 Դիմորդ

Արդէն երրորդ տարին է, որ Հայաստանում գործող 30-ից ավելի մասնաւոր բուհեր ընդունուելու համար դիմորդները քննութիւններ են յանձնում միասնական համակարգով: Այս կարգը սահմանող Կառավարութեան համապատասխան որոշման հետեւանքով մասնաւոր բուհեր ընդունուողների թիւը վերջին երեք տարիներին շեշտակի նուազեց՝ գրեթէ 90 տոկոսով: Ամենացածր ցուցանիշը գրանցուեց այս տարի:

«Ազատութեան» հետ գրոյցում Գնահատման եւ թեստաւորման կենտրոնի տնօրէն Գագիկ Մելիքեանն ասաց, որ այս տարի դիմորդների 12 հազար կազմող ընդհանուր թիւի պարագայում ոչ պետական բուհեր է դիմել ընդամենը 20 դիմորդ:

«Եթէ պետական բուհերում թափուր տեղեր կան, բնական է, երեխան ավելի շատ պէտք է ձգտի պետական բուհ ընդունուել, քան մասնաւոր», - ասաց Մելիքեանը:

Երեւանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր Ժորա Զանգիրեանն այնքան վրդովուած էր, որ

չցանկացաւ նշել, թէ այս տարի քանի նոր ուսանող ունեն: 8 հարկ ունեցող համալսարանի շէնքում նախկինում սովորում էին 3 հազար 5 հարիւրից ավելի ուսանողներ, այսօր մնացել են 6-7 հարիւրը: Մի քանի տարի յետոյ այս թիւը եւս կը կրճատուի:

Ըստ Զանգիրեանի՝ կառավարութիւնն ամէն ինչ անում է մասնաւոր բուհերից ազատուելու համար՝ հաշուի չառնելով տրուող կրթութեան որակը. - «Կազմակերպական-իրաւական ձեւը ի՞նչ կապ ունի տրուող կրթութեան որակի հետ»:

«Գլաձոր»-ի ռեկտորը համարիտ չէ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան այն պնդումներին, թէ միասնական համակարգ ներդնելով՝ բոլոր բուհերը կը յայտնուեն մրցակցային հաւասար դաշտում: Ըստ նրա՝ ի սկզբանէ չի ստեղծուել հաւասար դաշտ, որպէսզի արդար մրցակցութիւն լինի. - «Զի կարող լինել հաւասարութիւն, եթէ ենթադրենք, մի բուհին տալիս են պետպատուէր, հովանաւորում է պետութեան կողմից ամբողջութեամբ,

Հայ-Թուրքական Յարաբերութիւններում Դրական Փոփոխութիւն Զեւ Ակնկալում

Թուրքիայի նախագահական ընտրութիւններում Ռեջէփ Թայիպ Էրդողանի յաղթանակից յետոյ հայ-թուրքական յարաբերութիւններում այդ երկրի քաղաքականութեան մէջ նոր սկզբունքային զարգացումներ չեն սպասուում: «Ազատութեան» հետ գրոյցում նման կարծիք յայտնեց Գիտութիւնների ազգային ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէն, թուրքագէտ Ռուբէն Սաֆրաստեանը:

«Էրդողանը շարունակում է եւ կը շարունակի այն քաղաքական գիծը, որը մշակուել է նրա կուսակցութեան կառավարման շրջանում Հայաստանի, հայկական հարցի նկատմամբ: Ես կարծում եմ, կարելի է սպասել միայն որոշ տակտիկական քայլեր՝ կապուած, մասնաւորապէս, հայկական սփիւռքի հետ, ավելի սերտ կապեր որոնելու հանգամանքի հետ, բայց որեւիցէ սկզբունքորէն նոր մօտեցում թուրքիայի քաղաքականութեան մէջ ես այդ բնագաւառում չեմ

սպասում», - փոխանցեց Սաֆրաստեանը:

Ինչ վերաբերում է Յեղասպանութեան 100-ամեայ տարելիցին ընդառաջ թուրքիայի պահուածքին, ապա Սաֆրաստեանը հնարաւոր է համարում, որ Անկարան անի որոշակի քայլեր պարգայէս, միջազգային հանրութեանը մոլորութեան մէջ զցելու համար եւ սպաւորութիւն ստեղծելու, որ «Նոր Թուրքիան», ինչպէս ազգարարում է Էրդողանը, պէտք է նոր յարաբերութիւններ ստեղծի հայերի հետ, Հայաստանի հետ:

Ըստ Սաֆրաստեանի՝ թուրքիայի հետ յարաբերութիւններում Հայաստանը պէտք է շարունակի իր առջեւ դրուած համազգային նպատակները իրագործումը՝ Յեղասպանութեան միջազգային ճանաչում, դատապարտում եւ հատուցում:

Անդրադառնալով հայ-թուրքական արձանագրութիւններին, Սաֆրաստեանը կարծիք յայտնեց, որ դրանք հեռանկար չունեն:

Տարեկարգից Հայաստանի Բնակչութիւնը Նուազել է Սօս 7 Հազարով

Ազգային վիճակագրական ծառայութեան (ԱՎԾ) տուեալներով՝ այս տարուայ 6 ամիսների ընթացքում Հայաստանում մշտական բնակչութեան թիւը նուազել է ավելի քան 7300-ով, իսկ նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ՝ ավելի քան 2100-ով:

Ծառայութեան Մարդահամարի եւ Ժողովրդագրութեան բաժնի պետ Կարինէ Կոյումձեանի խօսքով՝ բնակչութեան թուաքանակի նուազման հիմնական պատճառը միգրացիան է. - «Եթէ առաջին կիսամեակում բնական յաւելածը կազմել է շուրջ 4 հազար 5 հարիւր, դա ծնունդների եւ մահերի տարբերութիւնն է, ապա գնահատուած միգրացիայի ցուցանիշի բացասական ցուցանիշը կազմել է 11 հազար 8 հարիւր»:

Նրա խօսքով՝ թէեւ Հայաստանում ավելի շատ ծնունդ է

գրանցուած, քան մահ, սակայն այս տարի, նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ, բնական յաւելածը կրճատուել է. - «Նախորդ տարուայ համեմատ՝ բնական յաւելածի ցուցանիշը նուազել է 0.4 տոկոսով»:

ՄԱԿ-ի կանխատեսումներով՝ արդէն 2 տարի յետոյ Հայաստանում բնական յաւելած չի գրանցուել, քանի որ մահուան դէպքերը ավելի շատ կը լինեն, քան ծնունդները:

«Հայաստանը ծերացող երկիր է համարուած, բայց արդէն մօտենում է ծերացած երկրների սահմանագծին: Համաձայն մեր կանխատեսումների, ցաւոք սրտի, բնակչութեան յաւելածը 2017 թուականից կը սկսի բացասական լինել», - ասաց ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետեանը:

«Հրապարակ». «Ինչքան Զծառայած Ու Դասալիք Կայ, Կամուֆլաժ Է Հագել»

«Հրապարակ» թերթը գրում է. «Սահմանային միջադէպերն առիթ եղան, որ ինչքան բանակում չծառայած դասալիքներ ու պաշտօնեաներ կան, որոնք չեն մասնակցել պատերազմին եւ փոշմանել են, որ ժամանակին «կամուֆլաժ» (զինուորական զգեստ) չեն հագել ու լուսանկարուել, որ հիմա ԵԿՄ շարքերում լինէին, վերականգնեն իրենց կենսագրութեան բացը:

Իսկ ընդունելութեան քննութիւնները սկսուելուց առաջ ասում են, թէ փակում են այդ [մասնաւոր] բուհերը եւ յետոյ տանել մտցնել միասնական համակարգի մէջ՝ մասնաւոր բուհին, որին ոչ մէկը իրաւունք չունի ընդունելութեան խաղի կանոններ թելադրել»:

Աւելի վաղ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնեանը «Ազատութեան» հետ գրոյցում նշել էր, թէ մասնաւոր բուհերը Հայաստանում պարգայէս

չկարողացան կայանալ: Նրա համոզմամբ՝ այսօր ոչ միայն մասնաւոր բուհերի թիւն է մեծ, այլեւ պետականներինը. 24 պետական համալսարան ունենք:

«Մասնաւոր կրթական հաստատութիւնները երեւի իրենց խնդիրներին չմօտեցան լրջօրէն: Նրանց կողմից մրցակցութիւնը պետական բուհերի նկատմամբ չի զգացուած: Իսկ պետական բուհերի միջեւ այդ մրցակցութիւնը կայ», - նշեց Սիմոնեանը:

ԼՈՒՐԵՐ

Արա Քոչուրեան. «Հայաստանի Հանդէպ Թուրքիայի Քաղաքականութիւնը Չի Փոխուի»

Թուրքիայում նախագահական ընտրութիւնների արդիւնքներն անսպասելի չէին. վարչապետ Ռեջէպ Թայյիպ Էրդողանի՝ առաջին փուլում յաղթանակը կանխատեսելի էր: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարեց Ստամբուլի հայկական «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Գոչուրեանը:



«Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Գոչուրեան

Նա նշեց, որ Օգոստոսի 28-ին կայանալու է նախագահի երդմնակալութեան արարողութիւնը: «Թուրքիայում շարունակուելու է աւելի քան 10 տարի իրականացուող քաղաքականութիւնը», - ընդգծեց Գոչուրեանը: Հայաստանի հանդէպ քաղաքականութիւնը նոյնպէս, նրա համոզմամբ, զգալի փոփոխութիւններ չի կրի: Ըստ լրագրողի, տարածաշրջանային գործընթացները մեծ յոյսեր չեն ներշնչում հայ-թուրքական յարաբերութիւնների բարելավման առումով: Արա Գոչուրեանը լաւելեց, որ 10 ամիս անց Թուրքիայում նաեւ խորհրդարանական ընտրութիւններ են նախանշուած: «Մեծ է հաւանականութիւնը, որ դրանք կ'անցկացուեն ժամկէտից շուտ», - նշեց նա՝ պարզաբանելով, որ Թուրքիայում քննարկուում է կիսա-

նախագահական հանրապետութեան անցնելու հարցը: Գոչուրեանը լիշեցրեց, որ նախագահը պէտք է անկուսակցական լինի: «Էրդողանը պէտք է հրաժարուի ինչպէս վարչապետի պաշտօնից, այնպէս էլ իշխող Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան ղեկավարումից: Այս պայմաններում նոր կառավարութիւն պէտք է ձեւաւորուի», - ասաց Արա Գոչուրեանը: Յիշեցնենք, որ Թուրքիայի գործող վարչապետ Ռեջէպ Թայյիպ Էրդողանը, հաւաքելով 52% ձայն, յաղթել է նախագահական ընտրութիւնների առաջին իսկ փուլում:

Նագարբաեւն Ու Լուկաշենկոն Քննարկել են Հայաստանի Անդամակցութիւնը ԵՏՄ-ին

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նագարբաեւը եւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն Եւրասիական տնտեսական միութեան զարգացման, այդ թւում՝ ԵՏՄ-ի մասին պայմանագրի վաւերացման եւ վերջինիս Հայաստանի եւ Ղրղզստանի միացման շուրջ հեռախօսով կարծիքներ են փոխանակել:

Հաղորդագրութեան մէջ, փոխանցում է «ՌԻԱ Նովոստին»:

2014թ. Մայիսի 29-ին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում Եւրասիական տնտեսական միութեան ստեղծման մասին փաստաթուղթ ստորագրուեց՝ Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի մասնակցութեամբ: Հայաստանը նոյնպէս յայտնել է կազմակերպութեանը միանալու մտադրութեան մասին. ԵՏՄ-ին Երեւանի անդամակցութեան հարցը նախանշուած է այս տարեվերջին: Միութեանը անդամակցելու մտադրութեան մասին յայտարարել է նաեւ Ղրղզստանը:

Երեւանից Արեւմտեան Հայաստան Եւ Գնում Նաեւ Օտարերկրեայ Տուրիստներ

Երեւանից Արեւմտեան Հայաստան (Արեւելեան Թուրքիա) են մեկնում ոչ միայն հայ, այլ նաեւ օտարերկրեայ տուրիստները: Այդ մասին Օգոստոսի 13-ին, լրագրողներին յայտարարեց Հայաստանի էկոնոմիկայի նախարարութեան գրասենյակի տնօրէն Կարէն Մեխակ Ապրեւեանը:

«Կան տուրիստներ, որոնք առաջարկում են տարածաշրջանային գրասենյակ, ոչ միայն Հայաստանի Հանրապետութեան, այլ

նաեւ Արեւմտեան Հայաստանի տարածքում: Այդ երթուղիները բաւականին յայտնի են, իսկ վերջին տարիների ընթացքում դրանով մեր երկիր աւելի շատ զբօսաշրջիկներ են գալիս», - նշեց Ապրեւեանը:

Նկատենք, որ նմանատիպ բնույթի տուրիստական ծառայութիւն մշակում է Հայաստանի ներքին տուրիստներին միութիւնը Ռուսաստանից գործընկերների մասնակցութեամբ:

Թրքահայ մտաւորականները

Մարտնակուած էջ 1-էն

կայացուցիչն է» ըսելով չփայլեցուցինք եւ հրապարակ չհանցինք, ինչպէս որ հիմա քու խօսքերդ չենք վերագրեր քեզի համար քու է տուողներուն. երկար տարիներու մեր իրաւագրկող մին պատճառը «թրքութեան» (եւ կամ քրտութեան, չէրքեզութեան, իսլամութեան եւ այլն) մէջ չտեսնաք:

Իր իսկ հողին վրայ իբրեւ սփիւռք գարնուած ժողովուրդ, ձեւով մը քարչ կու տանք մեր կեանքը,

իր իսկ հողին վրայ սփիւռքի վերածուած, փոքր եւ ինքնամփոփ: Վազ անցիր այլեւս մեզ իբրեւ խայծ գործածելէ, դուն քու խաղերովդ զբաղուէ՛, մինչեւ այն օրը երբ մենք՝ հայերս, յոյներ, ասորիներ, թուրքեր, քրտներ, չէրքեզներ, վրացիներ, ալեւիներ, քրիստոնեաներ, հրեաներ, իսլամներ հիմա քեզի համար քուէարկող եւ չի քուէարկող մեր եղբայրներուն հետ միասնաբար ցոյց տանք, որ քեզմէ աւելի լաւը ընելու կարողութիւնը ունինք. դուն քու խաղերովդ զբաղուէ՛...»:

Սերժ Սարգսեան. «Մեզ Համար Էլ Վիրաւորական Կը Լինէր, Եթէ Պարզուէր, Որ Երդողանը Հայ Է»

Նախագահ Սերժ Սարգսեանը գտնում է՝ չարժէ գարմանալ, որ Թուրքիան ամենաբարձր մակարդակով դարաբաղա-ազրբեջանական շփման գծում գոհուած գիտուողների մահուան կապակցութեամբ ցաւակցում է միայն Ազրբեջանին, քանի որ դա այն երկիրն է, որ ցանկացած հարցում միանշանակ աստարում է Ազրբեջանին:

Թիւնների ժամանակ: Դրա համար մենք շատ ուշադիր էինք՝ յանկարծ այդ արձանագրութիւններում որեւէ կէտ, որեւէ դրոյթ չլինի, որ կարող է մեզ կաշկանդել դարաբաղեան բանակցութիւններում: Այնպէս որ՝ այստեղ ամէն ինչ պարզ եւ յստակ է», - նշել է երկրի ղեկավարը:

«Ես իրօք կը գարմանայի, եթէ պարոն Էրդողանը ցաւակցութիւն յայտնէր նաեւ հայկական կողմին»:

Օգոստոսի 1-ին Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դաւութօղլուն իր ազրբեջանցի գործընկեր էլմար Մամեդբարովի հետ հեռախօսազրոյցում ցաւակցութիւններ էր յայտնել ազրբեջանցի 9 զինուորի մահուան կապակցութեամբ, որոնց մասին պաշտօնական Բաքուն այդ պահին յայտարարել էր: Նա նշել էր, որ իրենց սրտում «զգում են Գնահատակի ցաւն» ու հաւաստիացրել, որ իր երկիրը «միշտ էլ պաշտպանել է Ազրբեջանի տարածքային ամբողջականութիւնը»:

Ելույթ ունենալով NTV-ի «Խօսում են թեկնածուները» հեռուստահաղորդման ուղիղ եթերում՝ Էրդողանը, անդրադառնալով իր էթնիկ ծագման մասին շրջանառուող լուրերին, ասել էր. «Իմ մասին ինչէր ասես, որ չեն ասել, շատ են վիրաւորել, վրացի են անուանել, դեռ աւելի վատ, կը ներէք՝ բայց նոյնիսկ հայ են անուանել: Բայց ասեմ՝ ես հորիցս եւ մօրիցս իմացել եմ, որ Թուրք եմ: Աշխարհում ոչ մի քաղաքական գործիչ չէր հանդուրժի այսքան վիրաւորանք իր հասցէին, բայց միշտ համբերատար եմ եղել: Թող իւրաքանչիւր իրեն անուանի, ինչպէս ուզում ում է՝ Թուրք, քուրդ, դրանում ոչ մի վատ բան չկայ: Ես հպարտ եմ, որ Թուրք եմ»:

Անդրադառնալով Էրդողանի՝ հրապարակային ելույթում իր հայ լինելու վարկածը վիրաւորանք որակելուն, Սերժ Սարգսեանը նշել է, որ այստեղ էլ գարմանալի ոչինչ չկայ:

«Հայերի համար էլ վիրաւորական կը լինէր, եթէ յանկարծ պարզուէր, որ Էրդողանը հայ է: Այնպէս որ՝ այստեղ էլ պէտք չէ գարմանալ: Այլ բան, որ այդպիսի դիրք զբաղեցնող մարդիկ պէտք է գուսպ լինեն: Իսկ նրանք գապուածութիւն չունեն: Թուրքիայի դիրքորոշումը մեզ համար շատ պարզ, ակնյայտ է: Մենք դրանում քանիցս համոզուել ենք: Այդ թւում նաեւ՝ արձանագրութիւնների բանակցու-

Նախագահը նաեւ եւս մէկ բան է ընդգծել՝ շատերի այն կարծիքը, թէ իր առջեւ դնելով տարածաշրջանային առաջնորդ դառնալու ինդիք՝ Թուրքիան կարող է հաւասարակշիռ դիրքորոշում, հաւասարաշափ մտեցում ցուցաբերել:

«Դրանք միամիտ մարդիկ են՝ ոչ միայն մեր, այլեւ ուրիշների նկատմամբ: Չեմ տեսնում այսօր Թուրքիայում իշխող քաղաքական ուժի կողմից այդպիսի միտումներ, այդպիսի գործողութիւններ: Պէտք է շատ աւելի լայնախոս դրսեւորումներ լինեն, որպէսզի մենք երբեւէ համենք այդպիսի իրավիճակի», - եզրափակել է ՀՀ ղեկավարը:

Սարգսեան Եւ Ալիւ Յոյս Յայտնեցին

Մարտնակուած էջ 1-էն

լով՝ «Իսկ Ատրպէյճանը այդ բանաձեւի ո՞ր կէտը կեանքի կոչած է»:

«Եթէ մենք վերադառնանք 1990-ականների սկզբի իրադարձութիւններին, ապա դեռ այն ժամանակ հանգել էինք եզրակացութեան, որ հակամարտութիւնը ռազմական լուծում չունի, իսկ եթէ մենք նորից սկսենք մեղադրել մէկս միւսին, ապա այս հակամարտութիւնը դեռ երկար ժամանակ չի հանգուցալուծուի», - ըսած է Հայաստանի նախագահը:

Փութին, Սարգսեան, Ալիւ եւ եռակողմ հանդիպումէն ետք, Ղարաբաղ-Ատրպէյճան սահմանին վրայ տիրող լարուած իրավիճակը զգալիօրէն մեղմացած է:

Երեւան վերադարձին, Հայաստանի նախագահը անգամ մը եւս զգուշացուց Ատրպէյճանական կողմին՝ չդիմել արկածախնդրութեան. «Հայաստանն ունի բաւարարիկ հրթիռներ, որոնց գործողութեան շառաւիղը 300 կմ-ից աւելի է, եւ որոնք շատ կարճ ժամանակում ցանկացած ծաղկուն բնակավայր կարող են վերածել այնպիսի աւերակների, ինչպիսին հիմա Ադրբայժանի աւերակներն են»: «Արմինիզ» հեռատեսիլի ալիքով իր ունեցած հարցազրույցի ընթացքին խօսելով Ատրպէյճանի ղեկավարութեան յոխորտանքներուն մասին:

«Ատրպէյճանի նախագահը մի

շատ լաւ բան ասաց, թէ կողմերը քաջատեղեակ են իրենց հնարաւորութիւնների մասին: Իրօք, մենք քաջատեղեակ ենք, թէ ինչպիսի հնարաւորութիւններ ունեն Ատրպէյճանի ղեկավարութիւնը քաջատեղեակ է մեր հնարաւորութիւնների մասին: Այո, եւ դա ես առանց որեւէ մտափախութեան եմ ասում, Ատրպէյճանի ղեկավարութիւնը Նախիջեւանից կարող են «հասնել» նաեւ Երեւանի սահմաններին, եթէ ռազմական գործողութիւններ սկսուեն: Բայց այդպիսի բաներն անպատիժ երբեք չեն մտնում, եւ Ատրպէյճանի ղեկավարութիւնը շատ լաւ գիտի, թէ ինչ կարողութիւններ ու հնարաւորութիւններ ունեն հայկական ղեկավարութիւնը: Նրանք շատ լաւ գիտեն, որ մենք ունենք բաւարարիկ հրթիռներ, որոնց գործողութեան շառաւիղը 300 կմ-ից աւելի է, եւ որոնք շատ կարճ ժամանակում ցանկացած ծաղկուն բնակավայր կարող են վերածել այնպիսի աւերակների, ինչպիսին հիմա Ադրբայժանի աւերակներն են: Ընտրութեան հարց է: Եթէ այդ մարդիկ «իրենց գլխից ձեռք են քաշել», եթէ նրանք որոշել են, որ պէտք է գնալ ռազմական լայնածաւալ գործողութիւնների եւ, նոյնիսկ, կարող են Հայաստանի բնակավայրերը, որոնք սահմանամերձ չեն, ընտրել որպէս թիրախ, ապա թող իրենք իրենց պատասխանատուութեան մասին մտածեն», - ըսաւ Սերժ Սարգսեան:

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Նախկին Վարչապետ Հարիրիին 15 Միլիոն Գուլրեց Արսալին



Լիբանանի նախկին վարչապետ Սաատ Էլ Հարիրի, շուրջ շաբաթ է մը ի վեր Պէյրութ վերադարձած ըլլալով, ներկայիս իր բնակարանին մէջ սկսած է քաղաքական տարբեր հոսանքներու պատասխանատուներու հետ խորհրդակցութիւններ ունենալ, Լիբանանը դիմակալող խնդիրներու շուրջ: Իսկ Արսալի մէջ հակամարտ ոյժերու միջեւ բուռն բխուժներու հետեւանքով տեղի ունեցած մարդկային եւ նիւթական ծանր հետեւանքներու պատճառով Հարիրի 15 միլիոն տոլար յատկացուց, որպէս օգնութիւն շրջանի անմիջական կարիքներուն: Այս գումարը առաւելաբար պիտի յատկացուի դպրոցներու եւ հիւանդանոցներու վերաշինութեան եւ անհրաժեշտ այլ կարիքներու:

Այս առթիւ Սաատ Էլ Հարիրի հրապարակային յայտարարութիւն մը կատարելով դատապարտեց աս-

բեկչական արարքները եւ ամբաստանեց Հրգպալա Կուսակցութիւնը, որպէս Լիբանանի գերիշխանութեան եւ ժողովուրդին միասնականութեան սպառնացող կառույց:

Հարիրի յայտարարեց, որ ծայրայեղականութիւնը Լիբանանի թշնամին է, ուստի անհրաժեշտ է անոր դէմ պայքարել: Հարիրի հաստատեց, որ Լիբանանեան բանակը եւ ապահովական զանազան կառույցներ մշակած են իրենց զինուորական անհրաժեշտութիւնները մանրամասնող ցանկեր: Ըստ նախկին վարչապետին, ապահովական ուժերը նոր սարքերով կարողութիւն պիտի ունենան պաշտպանելու սահմանները եւ հակակշիռի տակ առնելու ապօրինի անցակէտերը: Հարիրի համաձայն, սարքերը ապահովելու գումարները պատրաստ են, նաեւ յստակ են վաճառող կողմերը:

Իրաքի մէջ նոր դահլիճ մը կազմուելու վրայ է

Իրաքի մէջ Ալ Մալիքիի կառավարութեան օրերը համրուած ըլլալով, նոր դահլիճ մը կազմուելու վրայ է: Սակայն Ալ Մալիքի կը յամառի վարչապետ մնալ...:

Իրաքի ապահովական վտանգաւոր կացութիւնը կը բարդանայ նաեւ քաղաքական սուր տագնապով: Նոր վարչապետի նշանակման սահմանադրական ժամկէտէն առաջ, նախագահ Ֆուատ Մասուժ նախարարաց խորհուրդը մը կազմուելու պարտականութիւնը յանձնեց Հայտար Ապպալիին: Անոր թեկնածու թիւնը առաջարկուած էր խորհրդարանի Ազգային Դաշինք համախմբուած անդամներուն կողմէ:

Ապպալիի նշանակումը ողջունեց նաեւ Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութիւնը: Իսկ Ֆրանսայի նախագահը կոչ ուղղեց կազմելու ազգային միասնականութեան կառավարութիւն մը:

Նախքան Ապպալիի վարչապետ նշանակումը, իրաքեան բանակէն եւ ապահովական ուժերէն բազմաթիւ անդամներ հաստատուեցան Պաղատի կեդրոնական Կանաչ գօտիին մէջ, պաշտպանելու համար ռազմավարական նշանակութիւն ունեցող կեդրոնները: Վարչապետ Նուրի Մէլիքի մերժեց Ապպալիի նշանակումը եւ ըսաւ, որ ինքն է պատասխանատուն խոր-



հրդարանական մեծագոյն՝ Օրինաց երկիր դաշինքին: Մէլիքի Դաշնային Դատարանին մօտ բողոք ներկայացուց նախագահ Ֆուատ Մասուժի դէմ եւ զայն ամբաստանեց սահմանադրութիւնը խախտելու լանցանքով: Մէլիքիի համաձայն, Մասուժ պէտք է զինք նշանակէ որպէս վարչապետ: Միացեալ Նահանգներու պետական քարտուղար ձոն Քէրի յոյս յայտնեց, որ իրաքի վարչապետ Նուրի Մէլիքի չի խոչընդոտեր իրաքի մէջ ազգային միասնականութեան կառավարութեան կազմութիւնը: Քէրիի համաձայն, նման կառավարութիւն մը կազմելը անհրաժեշտ է երկրի կայունութիւնը ապահովելու համար:

ԻՐԱՔԷՆ ՍԿԱԱԾ ԱՆԿՈՒՄԸ

Մեծ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Քսաներորդ դարու յիսուսական եւ վաթսուսական տարիներուն, Իրաքեան Տիւրքերը արաբական աշխարհի ամենէն արժէքաւոր դրամանիշը կը նկատուէր. եւ երբ այն օրերուն Լիբանանեան երեք լիւրան մէկ ամերիկեան տոլարի փոխարժէք ունէր, մէկ տինարը ութը լիւրայէն աւելի կ'արժէր, այսինքն մէկ տինարը գրեթէ երեք տոլար կ'արժէր:

Իրաքցիները Լիբանան օդափոխութեան կու գային եւ այն ատեն անոնք Միջին Արեւելքի ամենահարուստ երկիրը կը նկատուէին եւ Իրաքահայ համայնքն ալ արաբստանի ամենէն հարուստ հայ համայնքը կը ճանչցուէր:

Տիւրքերի ներկայ արժէքին մասին երբեք գաղափար չուների մինչեւ որ վերջերս կարդացի թէ Մուսուլի մէջ իր պետութիւնը հռչակած Իսլամական խալիֆէտութիւն կոչուող իշխանութիւնը ամէն մէկ Մուսուլցի Քրիստոնէացի բնակիչի գլխու փրկագինի հաստատած է, եւ այդ փրկագինի գումարը որոշած է ըլլալ 550 հազար տինար կամ 450 ամերիկեան տոլար: Այսպիսով, կէս դար տեւող իրաքեան ողբերգութիւններու շարքին տակ ոտնակոխուող անցեալի ազնուական տինարը դարձած է այսօր մէկ ամերիկեան տոլարին 1200 տինարի փոխարժէքով գիշող դրամանիշ: «Վայ Կիտի Կիւնլար» (Հէյ անցած օրեր) պիտի գոչէր մեծ հայրս եթէ այս օրերուն ապրէր իմանալով որ հազար իրաքեան Տիւրքեր մէկ ամերիկեան տոլար իսկ չարժէր:

Յաւալի իրականութիւն մը որուն ահաւոր դժբախտութեան շնորհիւ զարձնող ծանրութեան տակ կ'ապրի այսօր իրաքի քարիւղով հարուստ բազմազարհար ժողովուրդը:

Կրկնակի ցաւալի է որ իրաքի «Խալիֆէհաստատ» շրջաններու մէջ եղող քրիստոնէաները փրկագին վճարելու կ'ենթարկուին անհաւատալի թուող դրութեան մը ստեղծումով որ կարծէք թէ ժամանակի սլաքը հազար տարի դէպի ետ գացած է հոն:

Այս յօդուածի նպատակը իրականութեան մէջ տինարի արժէքին մասին խօսիլ չէ ոչ ալ հնամաշ միտքեր ու շարիայի օրէնքներուն հետեւող մարդոց մասին նիւթ արծարծել է, այլ մեր շատերու ծննդավայրերուն եւանոնց արաբ ժողովուրդներու աւերակ դարձած երկիրներուն եւ կեանքի պայման-

ներուն վրայ ողբալու տեսակ մը լաց է. եւ եթէ ինչպէս առածը կ'ըսէ՝ «ձիէն իջնելը եւ էշի վրայ նստիլը» ամօթ բան է, ապա, այսօր չոր գետին նստող հայու հիւրընկալ արաբ աշխարհը մեր սիրտը կ'արիւնէ:

«Արաբական Գարուն»ը որուն ցանկաց եւ որուն այնքան արժանի էր յառաջագիտ արաբը, եւ որուն ծիլ նետող ծաղկաստանին մէջ իրենց տգիտութեան թրաք թորներով մոռտք գործեցին կրօնապաշտ եւ կրօնամոլ հորդաները արաբստանի, այլափոխուեցաւ եւ փճացաւ ի շահ այն բոլոր կողմերուն որոնք յետադիմութեան քարայրներուն մէջ կ'ուզէն պահել արաբը, ըլլան անոնք իրենց սեփական շահերը պաշտպանող բռնատէրեր կամ տեղացի ու դրսեցի ճիհատի խենթեր կամ օտարին շահերը պաշտպանող վարձկաններ կամ նոր օրերու գաղութարար եւ կայսերապաշտ սինիատ իսլամները:

Արաբ ազգայնականութեան դրօշին տակ միանալ դաւանող եւ «Միութիւն, Ազատութիւն եւ Ընկերակցութիւն» լողունգներով Պաղեստին ազատագրելու ելած բռնատիրութիւնները, ինչպէս նաեւ իրենց դրամով ազգայինը խաթարող քարիւղի արաբ արքաներն ու իշխանները, այնքան ճնշեցին եւ խաւարի մէջ պահեցին իրենց ժողովուրդները որ անոնց մէջ լաւը ընդհանրապէս դարձաւ բանտարկեալ կամ գաղթական, եւ վատն ալ դարձաւ գործիք հզոր իշխանաւորին կամ դարձաւ անցեալի խալիֆէտութեան փառքին եւ ուժին տենչացող ճիհատի զինուոր: Ու մնացեալ լաւ կամ վատ չեղող մեծամասնութիւն կազմող միլիոնները դարձան աղքատացեալ երկիրներու դժբախտ, անտէր ու անտիրական բնակիչները:

Արաբական աշխարհի անցեալի ամենահարուստ իրաքին անկումը տեսնելէ ետք եւ իրմով սկսած սօսիւնդի պէս փլուզ միւս արաբ երկիրներու անկայուն վիճակը դիտելով մարդ կը մտածէ թէ որքան պէտք է անիծել Օսմանցիները որոնք ամբողջ հինգ հարիւր տարի մթութեան մէջ պահեցին արաբական աշխարհը եւ յետոյ զայն գաղութատիրութեան կեր դարձուցին, որուն Սալթա-Փիքօն իր սեւ ու կարմիր գրիչներով շինծու սահմաններ գծելով այսօրուայ եղբայրասպան կռիւներուն հիմք ծառայեց:

Իրաքէն սկսած անկումը արաբստանի գիտենք ինչպէս սկսաւ բաց ոչ ոք գիտէ թէ ինչպէս եւ երբ վերջ պիտի գտնէ:

ՄԴՅԿ Ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան

Շարունակուած էջ 1-էն

ուած է: Հոս պէտք է նշել, որ այս հանդիպումներու մեծագոյն ձեռքբերումը եղաւ այն, որ վերահաստատուեցաւ՝ Ղարաբաղեան հարցը բանակցութիւններու ճամբով լուծելու անհրաժեշտութիւնը, որ նաեւ մշտապէս եղած է Հայկական կողմի ցանկութիւնը»:

Հայնաձաւալ պատերազմի հաւանականութեան մասին խօսելով ան ըսաւ, - «Անկասկած պատերազմ սկսելու վտանգը միշտ առկայ է, այնքան ատեն, որ թշնամին նպատակ դրած է Ղարաբաղի հարցի լուծումը գէնքի ուժով պարտադրել, փոխանակ խաղաղ ճանապարհով լուծման հասնելու: Ատրպէյճանի վերնախաւը ատելութեամբ լեցուած է եւ ամէն օր սպառնալիքներ կը հնչեցնէ Հայաստանի եւ Արցախի ժողովուրդի հասցէին,

բան մը որ դէպի պատերազմ առաջնորդող կարեւոր հանգամանք կրնայ հանդիսանալ»:

«Ատրպէյճանը վերջապէս պէտք է հասկնայ, որ որքան ալ քարիւղէն ձեռք բերուած գումարներով սպառազինուի, միեւնոյնն է, պատերազմի միջոցով Ղարաբաղեան հարցը պիտի չկարենայ լուծել: Միակ ելքը բանակցութիւններու միջոցաւ հարցին վերջնական լուծման հասնիլն է, անպայմանօրէն բանակցութեան որպէս կողմ ունենալով Արցախի իշխանութիւնները: Մինչ այդ, սահմաններու ապահովութեան միակ երաշխիքը հայկական հզոր եւ մարտունակ բանակի ներկայութիւնն է», - եզրափակելով ըսաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Ընկ. Յակոբ Տիգրանեան:

ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏԵԱՆ.- «ՊԱՔՈՒՆ ՓՈՐՁՈՒՄ Է ՕԳՏՈՒԵԼ ՄՈՍԿՈՒՎ-ԱՐԵՒՄՈՒՏՔ ՕՐԵՑՕՐ ԱՃՈՂ ԶԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԻՑ»

Ozer.am-ի գրողակիցն է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցության ատենապետ Նարեկ Գալստեանը:

Ինչու ռազմական գործողությունները եւ դիւերսիոն յարձակումները ակտիւացան հենց այս հատուածում: ՌԴ-Արեւմուտք լարուածութիւնը կապ կարող է ունենալ իրավիճակի հետ:

Եթէ մի փոքր պատմական անդրադարձ կատարենք, ՆԱՏՕ-ի ուժերի կողմից Հարաւսլաւեան ռմբակոծելուց յետոյ Եւրոպայում այսպէս ակտիւ ռազմական գործողութիւններ չէին ծաւալուել այնպէս, ինչպէս հիմա Ուկրաինայում է: Այս առումով միջազգային հանրութեան ուշադրութիւնը սեւեռուած է Մոսկվա-Արեւմուտք օրէցօր աճող հակամարտութեան վրայ, ինչից, բնականաբար, կարող է եւ փորձում է օգտուել պաշտօնական Պաթոն: Դրա հետ մէկտեղ միամտութիւն կը լինի ասելը, որ ողջ քաղաքակիրթ աշխարհը դէմ է Հարաւսլաւեան Կովկասում լարուածութեան աճին: Լայնածաւալ պատերազմ ձեռք չի տալիս ոչ Ռուսաստանին եւ ոչ էլ Արեւմուտքին, բայց լարուածութեան աճ, սահմանային միջադէպեր՝ անխտիր բոլորին: Սա, բնականաբար, հնարաւորութիւն է տալիս յաւելել ճնշում գործադրել թէ՛ մեր, եւ թէ՛ ատրպէյճանցիներին վրայ, որի հիմնական աւարտը, ըստ շահագրգիռ ուժերի, կարող է դառնալ խաղաղապահների տեղակայումը շփման գծում, ինչը, բնականաբար, պէտք է անընդունելի լինի Հայաստանի եւ Արցախի համար: Մեր երկրի անվտանգութեան միակ երաշխիքը ո՛չ Մոսկուան է, եւ ո՛չ էլ Ուաշինգտոնը: Մեր ֆիզիքական անվտանգութեան միակ երաշխիքը հայկական Ձիւղուած Ուժերն են, եւ վերջ: Միամտութիւն կը լինի կարծել, որ որեւիցէ մէկը կարող է եւ ցանկանում է գապել Ալիեւին եւ իր կլանին վերջին 20 տարիների յոխորտանքները գործի վերածելու փորձում: Արդեօք վերջին իրադարձութիւնները նոր բանակցային ձեւաչափ պարտադրելու ենթատեքստ չի պարունակում:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը մշտապէս կողմ է արտայայտուել Արցախի՝ որպէս լիիրաւ միջնորդ բանակցային գործընթացում հանդէս գալու օգտին: Յաւօք, Ռոբերտ Քոչարեանի իշխանութեան տարիներին այդ ձեւաչափը խաթարուեց: Դրա հետ



միասին, ԵԱՀԿ Մինսկի խումբը կարծես թէ սպառել է իր ներուժը՝ հաշուի առնելով ոչ յստակ, լղոզուած յայտարարութիւնները, որոնք արւում են վերջին միջադէպերի հետ կապուած: Կը լինի նոր ֆորմատ, թէ կը մնայ հինը՝ կարծում եմ էական ոչինչ չի տայ: Աշխարհը պէտք է ճանաչի Արցախի ժողովրդի՝ սեփական հողում ազատ ու անկախ ապրելու ձգտումը՝ սա է ինդրի լուծման միակ ճանապարհը: Միջազգային հանրութիւնը մշտապէս առաջնորդում է երկակի ստանդարտներով, որի պատմական օրինակները մեր աչքի առջեւ են: Եթէ Արեւմուտքի համար կոսովոն, իսկ Ռուսաստանի համար Աբխազիան եւ Օսեթիան կարող են անկախանալ, Ղրիմը դառնայ ռուսական պետութեան մաս, ապա որն է Արցախի անկախութիւնը չճանաչելու պատճառը: Այստեղ արդարութիւն պէտք է փնտռել, արդարութիւնը միշտ էլ ուժեղին է տրւում, իսկ մեր ուժը բանակն է, քաղաքակիրթ, ժողովրդավարական պետութիւն ունենալու տեսլականը, որն այլընտրանք չունի: Մենք սրան պէտք է ձգտենք, մնացածը երկրորդական է:

Armenia is simply the Universe, unlimited and all-embracing with its "black holes" and galaxies, but in contrast to outer space, there is no vacuum there. On the contrary, Armenia is filled with scents, taste, a striking display of visual marvels ... And it's not like rubbing amber to cause an electrostatic phenomena, but Armenia is amalgamated through essence and uniqueness of every element of that construction, combining the designation of exceptional qualities of All-Armenian phenomenon in a permanent critical moment of truth of the uniqueness of its existence, allowing it to expand the boundaries of its own universe. And, as there are no two similar stars in space, there are no two similar Armenians, likewise. This individuality and irrationality of the Armenian people is one of the most existential for no other nation can be compared to them.

Armenia, often sharing boarders with others, over the centuries not only was interwoven within the rich layers of history, but it has laid a firm ground by propagating their neighbours with the genius of its essence. The Armenians have sprouted up in them so rapidly and conveniently that even the introverted "breeders" can't completely eradicate this culture.

The Armenians as a historical reality took place as far as the history of mankind took place. We find them documented on every page of human civilization: in the Bible and in cuneiform tablets or narrations of chroniclers. And this domestically peculiar self-consciousness encourages and validates some or irritates and antagonizes others, mainly the barbarians and nomads. The Armenians, because of their natural openness, honesty and



somewhat child's credulity have always been victims of historical intrigue and machinations. The fact is so amazing, that the Armenians instead of being bitter, they re-built their homes, created their families and have faithfully served their country. This is not a historical mission to demonstrate to the entire world, especially the necessity of being human, of being that the world longs for in a global sense.

Their harmonious planetary existence is confirmed by each sign of Mesripan alphabet. When one is dealing with them fist, one truly enjoys the perfection of each line, each bend and each bulge of the alphabet. They are not simply signs. They are turns and bends of the very vital lines owed to the Armenians: the periods of their peace and war, the embodiment of their spiritual essence, the identity of the Armenian nature — the controversial and zestfully beautiful at the same time. Some researchers of the Arermenian alphabet have already noticed that the number of elements in the angular and rounded letters of the Armenian alphabet are the same. It become known that the roundness of Armenian letters always strive for peace. However, in reality, it becomes very obvious that the lines and corners grant the Armenian alphabet the golden seal of harmony. Learning the Armenian alphabet, one can see in the curved section of the line an inexhaustible stock of ideas and creativity. This is subconscious desire to inventively think and live in the environment that gives rise to a significantly large number of talented and self sufficient people.

Armenia is difficult to be understood in the context of the the historical conditions surrounding its history. Armenia exists as a feeling, as a state of mind and condition of soul. Armenia is so turbulently temptatious and emotional, that its energy rolls over, permeates through and through, and tears apart from its routine. Armenia is like a violin, being able to cause the sounds of the ebb and the flow of love, a storm of outrage, streams of nostalgia, fires of passion and flare of revelations. Evidently, God's Angel Himself plays on this violin by protecting Armenia. While this charming melody keeps sounding, the Armenians will not cease to pass away, meaning that this sensationally marvelous condition of love will never expire or die.

Translator: Mark Karamian

Continued on page 4

Haypost Issued Five Stamps Dedicated to Armenian Genocide Centennial



YEREVAN — On July 29, 2014 five stamps have been put into circulation within the framework of the 100th anniversary of the Armenian Genocide.

The preparation of these stamps was contributed by the Armenian Genocide Museum-Institute by providing unique photographs.

One of the stamps is dedicated to Danish missionaries and great human-

ists Karen Jeppe and Maria Jacobsen.

On the other stamps the photo of the Armenian historian, author of many works on the Armenian Genocide and the Armenian Cause John Kirakosyan, as well as the photos of the Armenian Genocide Memorial in Boston opened in 2012, Komitas statue in Paris placed in 2003 and the Armenian Martyrs Memorial in the city of Montevideo, Uruguay opened in 1975 are depicted.

Protest Rally In Istanbul Against Erdogan

Continued from page 1

In a related development, the Peoples' Democratic Party (HDP) filed a complaint against Prime Minister Erdogan on charges of a violation of Turkish Penal Code (TCK) Article 216, which criminalizes publicly degrading a segment of society on the basis of class, race, religion, denomination, gender or regional differences. The HDP's complaint follows a similar complaint filed by a CHP deputy on Wednesday.

On Wednesday a group of Arme-

nian intellectuals including Anna Turay, Arat Dink, Aris Nalci, Garo Paylan, Harutyun Özer, Karin Karakasli, Kenan Yenice, Hayko Bagdat, Nazar Binatli, Nazar Büyüm, Ohannes Kiliçdagi, Rober Koptas, Sebu Aslangil, Sake Yalçın, Tatyos Bebek and Yetvart Danzikyan also published a joint text, entitled "We are beautiful." The text said the signatories "never praised any racist who was among them as their representative and never saw "Turkishness" (or Kurdishness, or Islam) as the reason behind our oppression."

First Turkish Film

Continued from page 3

called him about the threats or made any public statement on the issue.

The threats indicate that certain tensions and troubles are in store for Turkey in 2015, the centenary of the Armenian genocide. The debate on the Armenian genocide in Turkey in recent years has become as free as never before. Commemoration events are now held across Turkey on April 24,

the genocide remembrance day. Yet the latest incident suggests that ultra-nationalist groups are in a state of alert as the anniversary draws near.

The threats directed at Akin's film demonstrate that some quarters in Turkey have lost none of their intolerance and, emboldened by the judiciary's failure to act, feel free to target anyone they like. It seems no lessons have been learned from the past.

Al-Monitor.com


AMAA Awards \$140,450 in College Scholarships to U.S. and Canada Students

PARAMUS, NJ -- This year, the Armenian Missionary Association of America (AMAA) awarded \$140,450 in scholarships to 57 worthy students who attend colleges and universities in the United States and Canada.

In addition, \$15,000 will be awarded to needy and qualified university students in Armenia. These scholarships range from \$200 to \$600 as the cost of higher education in Armenia is significantly less.

Since its inception, the AMAA has helped thousands of students from kindergarten to high school with tuition aid, and hundreds of college students with scholarships. Moreover, the AMAA provides financial aid to schools and institutions of higher education in the Near East, including Haigazian University and the Near East School of Theology in Beirut.

The scholarships granted this year



were provided from several AMAA scholarship funds established over the years to help students in need. Students may request applications from AMAA headquarters in Paramus, NJ beginning in January of each year. The deadline to submit applications for the 2015-2016 academic year is May 1, 2015.

Armenia to Send Relief Aid to Iraqi Yezidis

Continued from page 1

and moving to neighboring countries.

Some 50,000 Yezidis live in Armenia at present, making them the country's single largest ethnic and religious minority. Scores of them have staged protests in front of the main government building in Yerevan, as well as foreign diplomatic missions, including the Iraqi and the U.S. embassies, in recent days.

Murazi and Sultanian, who is the head of the National Yezidi Committee of Armenia, compared what is happening to the Yezidis in Iraq today to the 1915 Armenian genocide in the Ottoman Empire. They accused the authorities in Yerevan of being indifferent to the plight of the Iraqi Yezidis. According to them, many Iraqi Yezidis would like to take refuge in Armenia, but the Armenian government is doing little to facilitate their immigration.

Sarkisian and Aliyev Call for Peaceful Resolution

Continued from page 1

nian withdrawal from Azerbaijani districts surrounding Nagorno-Karabakh.

"I have a rhetorical question to Mr. Aliyev: which points of those resolutions have been fulfilled by Azerbaijan?" shot back Sarkisian. "If we again blame each other then I think the conflict will remain unresolved for much longer," he warned.

Nevertheless, Putin seemed encouraged by Aliyev's and Sarkisian's stated readiness for compromise. "I am pleased to conclude that the president of Azerbaijan noted the need for a peaceful solution to the problem and that you've just said the same," he told Sarkisian. "This is the main thing because there is no bigger tragedy than that the death of people."

"We have to demonstrate tolerance, wisdom and respect for each other in order to find that solution," Putin went on. Both the Armenian and Azerbaijani peoples have the "good will" to end their long-running dispute, he said.

The talks continued behind the closed doors. The three leaders did not issue joint statements or talk to journalists afterwards.

The Itar-Tass news agency quoted Russian Foreign Minister Sergey Lavrov as saying after the summit that the conflicting parties have yet to overcome the main sticking points hampering a Karabakh settlement. Still, Lavrov said, Aliyev and Sarkisian "re-affirmed their commitment" to peace.

Putin held separate meetings with Aliyev and Sarkisian on Saturday. No

details of those meetings were made public. The Azerbaijani and Armenian leaders came face to face later on Saturday when they watched, together with Putin, a martial art tournament in Sochi.

The Russian president initiated the first Armenian-Azerbaijani summit in nine months in an apparent bid to defuse tensions along "the line of contact" around Karabakh and the Armenian-Azerbaijani border, which rose dramatically on July 31. At least 16 Azerbaijani and 7 Armenian soldiers have died in ceasefire violations reported since then.

Sarkisian accused Baku of "deliberate escalation" of the situation in the conflict zone at the start of his separate meeting with Putin on Saturday. Aliyev blamed the Armenians for the upsurge in fighting in his earlier statements.

The Sochi talks took place in the absence of the U.S., French and Russian diplomats co-chairing the Minsk Group, who had for months been trying to get Aliyev and Sarkisian to meet again and revive the peace process. This fact has fuelled speculation that Russia keen to sideline the two other mediating powers — the United States and France — due to its deepening standoff with the West over Ukraine.

Putin stressed on Sunday, however, that Moscow respects all existing "international formats" for Karabakh conflict mediation and "will continue to work together with our colleagues." He said he has taken the initiative only because of Russia's "special and particularly close relations" with both Armenia and Azerbaijan.

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ Ն.Ս.Ս.Ս-Ի ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ԱՐՅԵՍՏԱՎԱՐԺ ՊԱՐՈՒՍՈՅՑ ՏԻԿՎԱՐԴՈՒՅԻ ՄԻՆԱՍԵԱՆԻ -Ի ՅԵՏ



Ն.Ս.Ս.Ս-ի վարչութիւնը ինչպէս միշտ, հայ մանուկներն ու պատանիները համախմբեց հայ մշակոյթը վառ պահող ու ամենահօգոր ապրուցներէն մին հանդիսացող՝ հայկական պարի շուրջ, ուսուցանելու եւ փոխանցելու՝ Ամերիկահայ մատղաշ սերունդին աւանդաբար մեզի ժառանգուած, ազգային ու ժողովրդական մեր պարերը, իրականացնելով իմաստուն ու գիտակից միութեանականներու Ն.Ս.Ս.Ս-ի անուան տակ պարախումբ մը կազմելու բաղձանքն ու երազը:

2011-ին հիմնադրուած Ն.Ս.Ս.Ս-ի մանկապատանեկան պարախումբի յաջող ելոյթները՝ իւրաքանչեւ բնութիւնով, տարազանեցող սյուզանութեամբ, նազանքով, ու հիանալի կատարողութեամբ ու բեմավարութեամբ խանդավառած էին հանդիսատեսը, գնահատանքի արժանանալով հայ ու օտար ազգերու՝ որոնք թնդացուցած էին սրահները իրենց ծափահարութիւններով, խթան հանդիսանալով, պարախումբի սկիզբ առած աշխատանքին որ ընդարձակուեցաւ ու վերածուեցաւ մնայուն գործի պարախումբի հիմնադիրն եղող՝ Յարութիւն տէրվիչօղլեանի, եւ Արմինէ Լաջինեանի ջանքերով ու խոնարհ, ժպտադէմ ու արհեստավարժ, պարուստից՝ Տիկ. ՎԱՐԴՈՒՅԻ ՄԻՆԱՍԵԱՆԻ -ի շնորհիւ:

Մեր ժողովուրդի կենցաղին հիմնական մաս կազմող ժողովրդական պարերու եւ Ն.Ս.Ս.Ս ի նորակազմ պարախումբի մասին ուղղուած հարցերուն Տիկ. Վարդուհի Մինասեանը պատասխանեց հետեւեալ հարցերուն:

Հարց.1- Տիկ.Վարդուհի ի՞նչու ընտրեցիք պարախումբը եւ ի՞նչպէս ձեր մէջ յայտնաբերուեցաւ հայ պարախումբի սերն ու հետաքրքրութիւնը:

Իմ ընտրութիւնը դէպի պարարուեստը եղաւ իմ մանուկ հասակէս, երբ 6 տարեկան էի, 100 երեխաներու ընդմէջէն ընտրուեցայ պարարուեստի ուսումնարան որովհետեւ ընդունուելու պայմանները կը լրացնէի, ինչպիսին էր, ձիւրք, ճկունութիւն, արտաքին եւ տաղանդ: Պայմանները խստապահանջ էին որովհետեւ ուսումնարանէն վկայեալները պիտի դառնային ապագայի պարողներ եւ ի՞նչու է պարուստիցներ հայրենիքի եւ սփիւռքի մէջ գտնուող նորահաս սերունդին: Մօրս ուրախութիւնն անսահման էր, որովհետեւ մայրս պարի սիրա-

հար էր ու Հայաստանի երգի պարի պետական թատրոն Ալթունեանի խումբին մաս կը կազմէր: 8 տարի պալետային խումբի մէջ սովորելէս ետք աւարտելով անցայ հայկական ժողովրդական պարերու բաժին, որպէս 2-րդ կրթութիւն, ուր աւարտեցի մեծ յաջողութեամբ իմ տեղը գտնալով այդ շրջանի հռչակաւոր պարախումբերու մէջ որպէս ատակ ու տաղանդաւոր պարմանուհի:

Հարց. 2- Ն.Ս.Ս.Ս-ի նորակազմ մանկապատանեկան պարախումբը արուեստավարժի ձեր շնորհքով եւ հմտութեամբ արձանագրեց գնահատելի յաջողութիւններ եւ կրցաւ քայլ պահել Լոս Անճելոսի մշակութային կենտրոնի հետ, ե՞րբ կեանքի կոչուեցաւ Ն.Ս.Ս.Ս-ի պարախումբը եւ ի՞նչ նպատակով հիմնադրուեցաւ, ե՞րբ միացաւ պարախումբին որպէս ուսուցիչ եւ պարուստից:

Ն.Ս.Ս.Ս-ի նորակազմ պարախումբը առաջ եկաւ 2011-ին: Քանակով եւ կազմով փոքրիկ եղող այս խումբին երբ միացայ, մտածեցի մեծացնել, եւ տարբեր տարիքային դասարաններով հիմնել պարարուեստի դպրոց Փաստիինայի հայահոծ այս կեդրոնին մէջ ուր պարարուեստի կրթօճախի կարիքը կար որուն հիմնական նպատակն էր նպաստել Ամերիկահայ մշակոյթի կեանքի զարթոյթին ու ծաղկման:

Հարց 3.- ի՞նչ տարիքային խմբաւորումներ կ'ընդգրկէ Ն.Ս.Ս.Ս-ի մանկապատանեկան պարախումբը եւ ո՞ր տարիքին կրցայ հայ պատանին կամ մանուկը մաս կազմել այս պարախումբին:

Տարիքային սահմանափակում չկայ: 4 տարեկանէն սկսեալ մինչեւ 16 տարեկան փոքրիկները կրնան մաս կազմել խումբին տարիքային համապատասխան դասարաններուն մէջ:

Հարց 4.- ի՞նչ դժուարութիւններու հանդիպիպած էք հայ ազգային պարարուեստը ուսուցման ազգանուէր գործին մէջ եւ ի՞նչպէս կրցած էք յաղթահարել այս դժուարութիւնները:

Դժուարութիւնները բազում կ'ըլլան, երբ որեւէ գործ սկիզբ կառնէ գէրօյն, օրինակ տարիքային տարբերութիւններէ եւ տարբեր ընտանիքներէ դաստիարակութիւն ստացած խառնուածքով երեխաներու հետ համագործակցելու դժուարութիւններ, որ հարկ է մօտենալ բոլորին մանկավարժի հոգեբանութեամբ եւ ճկունութեամբ: Պէտք է լինել թէ՛ սփիւռքի մէջ ապրած հայ սերունդը լաւա-

տեղեակ չէ հայկական ժողովրդական պարերու արմատներէն եւ շարժական կառուցուածքէն եւ երաժշտութենէն. այդ ալ ուրիշ դժուարութիւն: Բայց ի՞նչ խօսք, ի հեճուկս այս բոլորին 20 տարուայ մանկավարժի հմտութեամբ ու փորձառութեամբ, կարողացած եմ կրթել ու հայկական պար սորվեցնել զանազան տարիքի երեխաներու հայկական երաժշտութեան ներքոյ, ու կարողացած եմ յաղթահարել այս բոլոր դժուարութիւնները, աւանդաբար մեզի ժառանգուած հայ մշակոյթն ու արուեստը ծանօթացնելով նոր սերունդին. յաջողցնելով ինձի վստահուած այս առաքելութիւնը յանուն հայապահպանման ու ազգպահպանման:

Հարց 5.- Ձեր դիտանկիւնէն նայելով Ամերիկահայ գաղութը ո՞րքանով կառչած է հայ մշակոյթին ու արուեստին, յատկապէս՝ հայ պարարուեստին:

Ես միշտ փառք տուած եմ Աստուծոյ, որ մեր համայնքի մէջ հայաստանէն կամ տարբեր երկիրներէ եկող հայերը կարողացան դնել հայապահպանման ու հայ մշակոյթի ու արուեստի ծառի արմատները. այդ ծառը ծաղկեցաւ դալարեցաւ եւ պտղատու դարձաւ ժամանակի ընթացքին: Հիմնական մենք ինչ որ սորվեք ենք մեր երկիրներում մեծատառով ուսուցիչներու կողմէ՝ այսօր գրեթէ նոյն ձեւով կը մատուցուի Ամերիկահայ նոր սերունդին, եւ ես կը կարծեմ պէտք է շնորհակալ ըլլանք նախ Աստուծոյ յետոյ մեր սիրելի հայրենիքին՝ Հայաստանին:

Հարց 6.- Ձեր պարարուեստի քաղած փորձառութիւնները ելած ի՞նչ խորհուրդ կան պատգամ կ'ուսուցանեն սերունդին որ կ'ապրի սփիւռքի մէջ եւ ծուլման արհաւիրքի դէմ առ դէմ է աւելն օր:

Ես ուղղակի մեր ընտանիքներին կը յորդորէի որ կարելիութեան չափով իրենց երեխաները պահեն հայկական համայնքներում, որովհետեւ արդէն երեխաները անընդհատ կը շփուին օտարներու հետ: Զուլման արհաւիրքին դէմ պայքարելու համար երեխան պէտք է ծանօթանայ իր հպարտալի ու փառաւոր պատմութեան եւ մշակոյթին, որպէսզի գնահատել գիտնայ, հպարտ զգայ նախնիներէն

իրեն ժառանգուած մշակոյթով ապա՝ կառչած մնայ իր արմատներուն եւ ձուլման հոսանքին դէմ կարենայ դէմ դնել ու պայքարիլ: Հարց 7.- Ի՞նչ հանգրուանները անցաւ պարուստիցի տիտղոսն ձեր ձգելու, ու փորձառու արհեստավարժի դիրքի հասնելու:

Տարիներ պարած եմ բեմայարթակներու վրայ, շրջագայած եմ զանազան երկիրներ եւ մասնակցած պարային փառաւոր ելոյթներու՝ ձեռք ձգելով ուսուցիչ լինելու մեծ փորձառութիւն եւ հմտութիւն. փոքր հասակիս նոյնիսկ իմ փորձառութիւնս կը բաժնէի ուրիշներու հետ, նոյն համոզմունքով այսօր իսկ կը փոխանցեմ զայն նոր սերունդին:

Հարց 8.- Ն.Ս.Ս.Ս-ի պարախումբը ներկայիս ի՞նչ ծրագիրներ եւ նախաձեռնութիւններ ունի, եւ ի՞նչ է ձեր ապագայի ծրագիրները այս առնչութեամբ:

Ծրագիրները շատ շատ են. պարախումբը յետագային պիտի ներկայանայ նոր ծրագիրներով եւ հանդէս պիտի գայ զանազան առիթներով, եւ մասնագիտական մակարդակով պիտի բարձրանայ բեմ ներկայացնելու Ն.Ս.Ս.Ս-ը աւելցնելով փայլուն օղակներ իր յաջողութեան շղթային: Իսկ իմ Ամենամեծ երազանքս է որ Ն.Ս.Ս.Ս-ի կեդրոնը ունենայ պարարուեստի դպրոց ու դառնայ հայ ժողովրդական պարերու ուսուցման հիմնաքարը:

Տիկ. Վարդուհի, կը մաղթեմ քեզի անկտրում կամք. ասպարեզի ուղիղ ըլլայ հարթ, անխոչընդոտ, իրագործելու պարուստիցի առաքելութիւնը, որովհետեւ ժողովրդական պարերը դրական ազդեցութիւն ունին նոր սերունդին վարք ու բարքին վրայ, կը նպաստէ տղոց եւ աղջիկներուն միջեւ եղած ընկերային յարաբերութիւններու հաստատումին ու կ'արտացոլէ հայ ժողովուրդի ազգային բնավորութիւնն ու քաղաքակրթութիւնը:

Ինչպէս մեր ազգային երաժշտական դպրոցի հիմնադիր երաժիշտ բանահաւաք, Կոմիտաս վարդապետ կ'ըսէ ՊԱՐՆ ԱՐՏԱՅԱՏՈՒՄ Է ԻՐԱԲԱՆՉԻՐ ՄԻ ԱԶԳԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ, ՄԱՆԱԻՆԴՐԱՐՔՆ ՈՒ ԲԱՂԱԲԱԿՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ:

Հարցազրոյցը վարեց ԱՆԻ ՄԱՐՏԵԼԵԱՆ

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

«ՀԲԸՄ ՀԱՅ ԿԻՆ»Ի ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԸՆՏՐՈՎԻ ՎԻԺՈՒՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ



ՄՈՆԱԶԷՅԹՆԵԱՆ

Յուլիս 26ին, Փաստախնայի ՀԲԸՄի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ ընտրովի վիժումներու մասին քննարկում մը՝ «ՀԲԸՄ Հայ Կին»ի կազմակերպութեամբ: Ընտրովի վիժումները ընդհանրապէս եւ յատկապէս Հայաստանի մէջ մտահոգիչ համեմատութիւններու հասած են: Հայրենի վիճակագրական տուեալներ կը հաստատեն, թէ ընտրովի վիժումներու հետեւանքով՝ տարեկան շուրջ 1400 աղջիկներու ծնունդը կը խափանուի՝ ստեղծելով 100 աղջիկ եւ 114 տղայ համեմատութիւն մը, որ չուի անդրադարձ ունի բնակչութեան աճին, ի վերջոյ նաեւ՝ ամուսնութեան հաւանական թեկնածուներու ընտրութեան վրայ: «ՀԲԸՄ Հայ Կին»ի նախաձեռնութիւնը կը նպատակադրէր այս կարեւոր հարցին մասին տիրող հանրային թմրութիւնը թօթափել եւ հաւանական լուծումներ քննարկել:

Ձեռնարկի բացման խօսքով ելոյթ ունեցաւ «ՀԲԸՄ Հայ Կին»ի անդամուհիներէն Լուսինէ Նալպանտեանը եւ հանրութեան գիտակցութիւնը խթանող վիճակագրական տուեալներով հաստատեց, թէ մինչ աղջիկ եւ տղայ ծնունդներու բնական համեմատութիւնը 100 աղջիկ եւ 102-106 տղայ է, Հայաստանի մէջ հաւասարակշռութիւնը խախտած է, իսկ Գեղարքունիքի մէջ 100 աղջիկ եւ 124 տղայ կը հաշուէ անիկա: Աղջիկներու վիժումը յաճախակի է 3րդ եւ 4րդ յղութիւններու ատեն, երբ ծնողքը տղու մը ծնունդը առաջնահերթ կը նկատէ:

Ընդհանրապէս վիժումներու յաճախականութեան հետեւանքով, 2013ին Հայաստանի մէջ ծնունդները 1.7 տոկոսով նուազած են: Հետեւաբար, «մեր ազգի շարունակումը ապահովելու համար, երեք եւ աւելի գաւազ ունենալու քաղաքականութիւնը պարտաւորիչ է, այլապէս՝ 50-100 տարի ետք, հայրութիւնը պատմական յիշողութիւն կը դառնայ», եզրակացուց Լուսինէ Նալպանտեան:

Օրուան առաջին խօսողն էր «ՀԲԸՄ Հայ Կին» Երիտասարդաց խմբակէն իրաւաբան Թալին Եագուպեան, որ միաժամանակ անդամ է ազգային-հասարակական գանազան կազմակերպութիւններու, ներառեալ՝ Կլենտէյլ քաղաքի քաղաքացիական ծառայութիւններու բաժինին:

«Ընտրովի վիժումները ընթացիկ դարձած են: Նման միջոցներու դիմող ծնողներու ուսման եւ նիւթական մակարդակը վճռական

դեր չեն կատարեր. երեւոյթը գիւղերէն աւելի յաճախակի է քաղաքներու մէջ», ըսաւ ան: Այս հաստատումէն ետք, Թալին Եագուպեան մասնաւորեց. «Յայտնապէս խորական վերաբերում կայ կիներու հանդէպ. հակառակ իրենց ուսման մակարդակին, լաւ վարձատրուող կամ կառավարական պատասխանատու պաշտօններու չեն տիրանար անոնք եւ հետզհետէ երկրորդ կարգի քաղաքացիներ կը դառնան: Այր եւ կնոջ անհաւասարութեան այս մտայնութեան հետեւանք է տղայ գաւազներու վայելած նախապատուութիւնը»:

Իր նիւթին լիովին տիրապետող բանաստեղծ զգուշացուց, թէ ընտրովի վիժումներու բերումով, ծնունդներու բնական համեմատութեան խախտումը ժամանակի ընթացքին վտանգաւոր հետեւանքներ կ'ունենայ բնակչութեան աճին վրայ: Իսկ անմիջականորէն, պէտք է նկատի առնել գործազրկութեան տագնապին պատճառով արտասահման մեկնող այրերը: Այս երեւոյթը իր անդրադարձը կ'ունենայ սեռերու անբնական համեմատութեան, բնականաբար նաեւ՝ բնակչութեան աճին վրայ: Այլ խօսքով՝ «բնակչութեան նուազումը կը նշանակէ աշխատողներու եւ արդիւնաբերողներու պակաս, եւ այդ իսկ պատճառով՝ ամուսնութիւններու բնոյթի փոփոխութիւն», աւելցուց ան:

Հայաստանի խորհրդարանը խոստացած է արգիլել սաղմնային վիճակի մէջ գտնուող երեխայի սեռը ծնողքին փոխանցելը: Սակայն արգելքը չըջանցելու կարելիութիւնները չեն պակսիր: Թալին Եագուպեան յիշեց նաեւ, թէ յաճախակի եւ ընտրովի վիժումներու առաջը առնելու տեսակէտէն, «ՀԲԸՄ Հայ Կին» Յղի կանանց հայրենի հինգ կեդրոնները բժշկական եւ դաստիարակչական լայն միջոցներ կը տրամադրեն յանուն կանանց, նորածիններու եւ ընտանիքներու բարօրութեան, հետեւաբար նաեւ՝ բնակչութեան առողջ աճին:

Երկրորդ խօսողը ընտանեկան հարցերու մասնագէտ հոգեբոյժ Շաքէ Եկաւեանն էր, որ 80ական թուականներէն ի վեր կը ծառայէ տեղական թէ հայրենի ընտանեկան ախտագիտութիւններու դարմանման: Ան հանգամանօրէն անդրադարձաւ խորունկ արմատներ ունեցող այրերու եւ կիներու անհաւասարութեան, որ ընտանեկան փոխուող պայմաններու հետեւանքով՝

Շաք.ը էջ 20

ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Առաջին անգամն էր հանդիպում էինք Վարոսի հրաւերով համաձայնեցուած ծրագրով, այն էլ ոչ թէ փողոցում, այլ՝ ճաշարանում: Վարոսի հետ ծանօթացել եմ Գլենդէլում՝ Իրանահայ միութեան շաբաթօրեայ հանդիպումների ընթացքում, ոչ շատ երկար անցեալով: Նա երիտասարդ տարիքում ծնողների հետ Իրանից հայրենադարձում են Հայաստան: Նա որպէս ուշիմ եւ ուսումնասէր մէկը Հայաստանում համալսարանաւարտ է դառնում որպէս ճարտարապետ-շինարար: Յաւուր նա էլ ընտանիքով արտագաղթում է Ամերիկա սովետի օրօք Հայաստանի անկախացումը մօտիկից չտեսած եւ չմասնակցած, թէ ինչպէս հայաստանաբնակ եւ արցախաբնակ հայրութիւնը ինքնորոշման, անկախացման բռունցքներ սեղմած ու պարզած պահանջում էր ազատութիւն եւ Արցախի միացում, եւ ինչ որքան գոյութիւն՝ ահաւոր երկրաշարժը հայոց նոր կեանքի պայքարը սուզի մատնեց: Հազարաւոր զոհեր եւ հարիւրհազարաւոր տնագուրկ աղէտեալներ, սակայն այս շարաքաստիկ պայմաններում ազատութեան ձգտումը կանգ չառաւ եւ Արցախի կտրուելը ատրե՛ջմանի լծից շարունակուեց միահամուռ կամքով ու պայքարով: Հայր յաղթեց ատրե՛ջմանցի վոհմաններին, որոնք ժանիքները սրած արշաւում էին Արցախը գրաւելու եւ ժողովրդին կոտորելու նպատակով, բայց նրանց եթաղաններն ու թուրերը ժայռերին դէմ առան, պարտուեցին եւ հալածուած ու կոտորուած իրենց որջերը վերադարձան:

Այդ տարիները տակալի տարիներ էին, միթի ու սառնամանիքի տարիներ, պատիւ մեր հայաստանցի եւ արցախցի քոյր ու եղբայրներին, որ դիմակայեցին ամէն տեսակ զրկանք ու դժուարութիւն կուրծքով պատերազմի յաղթութիւնը, ազատագրեցին Արցախը թշնամուն հասկացնելով որ ժամանակները փոխուել են, հայր այն խեղճ ու վախկոտ հայր չէ, որ տարածք գիջի թուրքին, դեռ կը գան աքիլէսները կորցրածը վերադարձնելու համար, ահա այդ հերոսութեամբ խաւարը չքացաւ, եղեւ լոյս, եղեւ յաղթութիւն եւ եղեւ ազատութիւն, սակայն ազատութեան բարիքները չիմաստաւորուեցին հասանք ոչ ցանկալի վիճակի՝ Հայաստանի բնակչութեան մէկ երրորդը արտագաղթած: »Այս ամէնի մէջ ամենացաւալին խաղաղ օրերին իր հայրենիքից հեռացող հայն է: Նա այսօր հեռանում է սեփական ազգի օտարների վերաբերմունքից, որոնք ակամայ, իրենց անձնական շահերից ելնելով, գործիք են դարձել միջազգային կառավարող ուժերին: ՄԵՐ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԵՐԱՆԸ / Ռուզան ԱՍԱՏՐԵԱՆ 15/07/2013, Գրական Թերթ:

Թող արտագաղթ ցանկացողները լաւապէս ըմբռնեն, որ ճակատագրական սխալ են թոյլ տալիս հայրենին թողնելով, ժամանակաւոր դժուարութիւնների հետեւանքով, անգիտանալով որ հայրենի հողի վրայ ապրելն ու գոյատեւելն ինքնին ամենաբարձր արժէքն է ներկայացնում հոգեկան եւ մտային դիտանկիւնից քննուած, դժուարութիւններ միշտ էլ լինում են մարդու կեանքում՝ տոկալով, համբերելով, աշխատասիրութեամբ եւ խելամուտութեամբ նրանք աստիճա-

նաբար փարատուելու են:

Վարոսը տեղափոխուելով Ամերիկա հաստատուած է Լոս Անջելէսում, կեանքի խոչընդոտներ ու դժուարութիւններ յաղթահարելով նա դարձել է ճանաչուած շինանիւթերի վաճառական, աշխարհի տարբեր երկրների հետ առեւտրական կապեր հաստատելով, նա իր հսկայ եւ մեծ տարածութեամբ սեփական վաճառատարածքն ունի, որը ղեկավարուած է ընտանեկան կազմով՝ կինը եւ երկու տղաները, ծառայութեան ունենալով պաշտօնեաներ: Նա իր աշխատանքի ժամերից բացի նաեւ իր մասնակցութիւնն է բերում գրական, ազգային-հասարակական եւ քաղաքական հանդիպում-դասախօսութեանց: Մտքով եւ հոգով նա հայի հետ է, նպատակ է հետապնդում հայրութեան-Հայաստանին օգտակար լինել: Կեանքի է կոչում՝ Chamber of Commerce (Առեւտրական պալատ) կազմակերպութիւնը հայ վաճառականներին կենտրոնացնել նպատակաւոր աշխատանքի համար իր մշակած ծրագիր-կանոնադրութեամբ, սակայն իր սպասելիքները չի արդիւնաւորում, մի որոշ ժամանակ հիւանդութեան պատճառով հեռու է քաշուած ասպարէզը թողնելով մի քանի հոգիների, որոնցից սպասում ենք առեւտրական զարգացում հայրենիքի արդիւնաբերութիւնների սպառման շուկայ գոյացնել: Վերոնշեալ տեղեկութիւնները ակնարկ էր Վարոսի կեանքի անցած ճամբի մասին: Նրա գիտութեան շտեմարանը հարուստ է տարբեր գիտելիքներով, նա խորանում է իւրաքանչիւր երեւոյթի, իրադարձութեան ընդերքը, նոյնիսկ կրօնների, ֆոլկլոր բառերի ծագման առնչւող:

Մեր հանդիպման խօսակցութիւնը պտտուեց ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ հասկացողութեան շուրջը.

-Սիրելի Վարոս ինչպէ՞ս ես պատկերացնում բարեկամութիւնը.

-Բարեկամութիւնը պէտք է, որ սխալուենք հարազատի կամ ազգականի հետ, սրանք տարբեր իմաստ եւ առնչութիւններ ունեն:

-Ես այն եմ հասկանում որ մէկի նկատմամբ, եթէ բարի կամք, բարի ցանկութիւն դրսեւորես, օգտակար լինես, ցաւին սպեղանի լինես, դառնում ես այդ անհատի բարեկամը:

-Չեմ ժխտում բացատրութիւնդ, բայց թոյլ տուր աւելացնեմ, բարեկամ լինել, այսինքն ակնկալիք չունենայ, Աւետարանում յիշուած Մամարեցու պէս լինել, օգնիր եւ մոռացիր, սրտեր ուրախացրու:

-Սակայն այսօրուայ պայմաններում ինչպէ՞ս կարելի է, չէ՞ որ բարեկամութիւնը հիմնուած է փոխադարձ շահերի վրայ՝ հացփոխութեան վրայ:

-Քաղաքական եւ առեւտրական գետնի վրայ կարող է այդպէս լինել, բայց ոչ ընկերային մեր յարաբերութիւններում:

Մեր խօսակցութիւնը ընդհատուեց մեքզիք մատուցողի միջոցով սեղանին դրուած ըմպելիքի պատճառով, ապա ես շարունակեցի ի պատասխան Վարոսին:

-Ես քո ասածներից այն եմ հասկանում, որ մարդս պէտք է արեւի յատկութիւն ունենայ, ինչպէս գիտենք արեւը լոյսի եւ ջերմութեան անսպառ շտեմարան է,

Շաք.ը էջ 20

«ՆԵՐՅԱՅԵՑՈՒՄ» ՅԱԿՈՐ ՅԱԿՈՐԵԱՆԻ ԼՈՒՌԹԵԱՆ ՄԷՋ

ՄԵԼԱՆԻԱԲԱԴԱԼԵԱՆ

Անցած տարի Մարտի 9-ին կեանքին հրաժեշտ տուեց արդի հայ գեղանկարչության վարպետը՝ Յակոբ Յակոբեանը: Ընդամենը 2 ամիս յետոյ լրանալու էր նրա ծննդեան 90-ամեակը. վարպետը ստեղծագործական ծրագրեր ու նոր մտայնացումներ դեռ ունէր՝ «Տիգրան Մեծ - Հալլէ» յուշակոթողը, իր յոբելեանի առիթով ցուցահանդէսը, որ տասնեակ իր ցուցահանդէսների մէջ առանձնապատու էր լինելու, որովհետեւ բացառապէս քանդակների ցուցադրութիւն էր նախապատրաստում: Յաւօք չհասցրեց, Գաֆեանեան արուեստի կենտրոնում, նախատեսուած օրն իսկ, Մարտի 26-ին բացուեց «Երկաթէ երկեր» ցուցահանդէսը՝ անակնկալի բերելով Յակոբեանի արուեստի լաւատեղեակին անգամ: Քանդակների այդ խումբը յայտնաբերում էր արուեստագէտի մտեցումը իրերի աշխարհին, նրանց միջոցով թափանցում մարդկային էութիւն-



photo by Hraparak

թիւնը, հողի ամալութիւնը, քարի մենակութիւնը Յակոբեանի կտաւներում հոգի ունեն, շնչում են, շարժում, խօսում: Օդի մէջ պտտող կեանքի սաղմը, բոցը, շունչն էր նկարում Յակոբեանը, վերահաստատում կեանքի շարունակելիութեան գոյնը:

Այս տարի Մայիսին 10-ին Ազգային պատկերասրահում բացուեց ցուցահանդէս, որ նուիրուած



ների ու առասպելական էակների ֆանտաստիկ աշխարհ, վերահաստատում կեանքի գեղեցկութեան բազմազանութիւնը, իրերի թաքնուած ուժը, դրանց վերափոխման հնարաւորութիւնը, նիւթի վերացարկման ու նորի յայտնաբերման հաճոյքը: Սառը, մետաղէ անհրապոյր իրերին արուեստագէտը կեանքի շարժում ու շերտեր էր հաղորդել. առհասարակ Յակոբեանը սիրում է կեանքի մերկութիւնների մէջ տեսնել գեղեցկութիւններ, նկարելով չորուկ թիւեր, քարքարոտ, արեւախանձ ճանապարհ կամ լերկ լեռնալանջեր, նա այնպիսի միջավայր է ստեղծում, որ կտաւի լուծութեան մէջ մարդկային զգացմունքների մի ամբողջ սիմֆոնիա է հնչում:

«Ամէն նկարիչ,- ասում էր նա,- իր աչքերով եւ գոյներով կը ներկայացնէ» իր աշխարհը, իմը կանաչ Հայաստանը չէ, աւելի» աշնանային Հայաստանն է: ... Աւելի ուշ աշնան, ըսենք, երբ բնութիւնը կը սկսի կարծես քնանալ, հանգստանալ, իր աշխուժութիւնը կը վերջանայ: Կը նկարեմ վաղ գարունն ալ» որ բնութեան կուտակուած ուժերու չբացուած վիճակն է»:

Գեղանկարչի աչքը՝ զգայուն ու նուրբ, տեսնում էր կեանքի թաքնուած հրաշքը, նորաբողբոջը, դեռ չծնուածը, ծառի ներսը: Այդ պատճառով է, որ ծառի մերկու-

էր վարպետի 90-ամեայ յոբելեանին եւ կրում էր «Ներհայեցում» խորագիրը: Նկարների ցուցադրութիւնը ծաւալում էր երեք սրահներում:

էքսպոզիցիայի հեղինակը՝ նկարչի դուստրը՝ Նորա Յակոբեանը, մասնագիտութեամբ ճարտարապետ,- նա նաեւ նկարում է,- զգայուն խորհրդածող արուեստագէտ, գաղափարական յստակ կոնցեպցիա էր դրել էքսպոզիցիայի հիմքում՝ ներկայացնելու նկարչի ստեղծագործական տարբեր փուլերի, դրանց զարգացումների գեղագիտական ընդհանրութիւնները ներքին իմաստային տեսանկիւնից՝ նկատել տալով յետագայ զարգացումների նախնական վիճակը: Հայաստանեան սկզբնական շրջանի գործերի կողքին եզրապատական շրջանի մի քանի աշխատանքների ներկայութիւնը նկարչի գեղագիտական մտածողութեան ու աշխարհայեացքի սկզբունքային ընդհանրութեան վկայութիւնն է: Այսպէս՝ եզրապատական շրջանում արուած մանեկներ յետագայում վեր է անձուր գլխաւոր պերսոնաժի. այս ֆիգուրի նկարչական տարբեր վիճակները յետագայում իմաստային նոր աշխարհ, նկարչական համակարգ են ստեղծում նրա արուեստում: 20 տարեկանում արուած «Աղօթողները» նկարաշարը զարմացնում է ներքին վիճակների՝ միջավայրի (եկեղեցական), միջո-

լորտի (աղօթական ինքնասուզումներ) հետ հաղորդակցման ու դրա վերարտայայտման հասունութեամբ, երբ վաղ տարիքից արդէն նրա վրձինը կարողացել է հարագատօրէն պատկերել կեանքի կեռամաներում յայտնուած, հարուածներից շուրթած ու շփոթահար մարդկանց անզօրութիւնը, այսինքն ունենալ միջոցառումի սուր զգացողութիւն եւ ամենակարեւորը՝ ստեղծել, փոխանցել կարեկցանքի շերտութիւն այս մարդկանց նկատմամբ:

Յակոբ Յակոբեան նկարչի համար ճակատագրական բեկումն եղաւ այն պահ, երբ նա ծննդավայրից՝ Եգիպտոսից որոշեց տեղափոխուել Հայաստան: Երկու երկրների քաղաքակրթական, մշակութային, սոցիալական տարբերութիւնների յաղթահարումը՝ այն էլ խորհրդային համակարգի 60-ականներին եւ յետագայում նոյնպէս, թէ ի՞նչ գին է ունեցել նկարչի համար, դժուար չէ կուսել՝ ծանօթ լինելով ներգաղթյալների կեանքի պատմութեանը, նրանց մարդկային, հոգեբանական դժուարին վիճակներին: Հիմա արդէն, տարիների հեռաւորութիւնից որոշակի է՝ ճակատագրի այդ նշանը, սահմանի հատումը անհրաժեշտ այն քայլն էր, որով պայմանաւորուեց Յակոբեանի արուեստի յետագայ ընթացքը: Սկսուած նոր փուլը ինքնաշարժաբերման նոր տարածութիւններում իմաստաւորում էր կեանքի ամէն շարժում. ամէն պահ, նշան, բախում, հոգեբանական, սոցիալական անջրպետ, նեղ ճանապարհ, միտք ու մտորում մարդուն ճանաչելու, նրան աւելի մերձենալու եւ հասկանալու համար էր:

Յակոբեանի նկարչութեան բուն ասելիքը կտաւի խորքում ծաւալուող «ժամանակի հոսքի» մէջ է տարրալուծում, խոհի ու խոկման մղում, անգամ ակամայից եւ յայտնուած ժամանակից այն կողմ: Այս զգացողութիւնը նրա նկարչութեանը մետաֆիզիկական

է՝ Յակոբ Յակոբեանի նկարչութիւնը խորապէս մարդկային եւ մարդասիրական ու յուզիչ է, որի հիմքը, ակունքը կարեկցանքի զգացումն է, գիտարտութիւնն առ մարդը, սէր ու հիացում՝ առ բնութիւնը, առ մոլորակը. սէր՝ որ ճանաչողութեան անդադար որոնումներում փորձում է սեփական հարցադրումների պատասխանները գտնել: Մտածողի, ստեղծագործողի նրա բնածին յոյզը բերում է հոգեբանական, մարդաբանական, հասարակագիտական՝ սեփական փորձից ելնող իմաստութիւնների, փորձում հասկանալ անկատար կեանքի, կէս-պուտո երջանկութեան, մարդու երկու թեան, նրա մարմնային ու ֆիզիքական տառապանքների բուն, խորքային պատճառները, թէ ինչո՞ւ մերթ խնդում, մերթ լալիս է այդ հոգին:

Պատկերային ձեւերը մարդկային կեանքից փոխադրում են բնութեան աշխարհ, յետոյ անցնում իրերի խորքը: «Մարդը եւ բուսը» յայտնի կտաւը, մարդու ձեռքերի մէջ ծիլ տուող բոյսի՝ նրա ու բնութեան հետ մարդու կապի խորհրդանշան է, որի խզման վտանգները հետագայում այնպէս տաղանապեցնելու էին նկարչի հոգին:

Յակոբեանի բնապատկերի գեղեցկութեան հմայքը ներքին անորոշ շարժման մէջ է. ուշ աշնան խամրող գոյների ու վաղ գարնան դեռ չարթնացած կանաչի միջեւ կապը զգայական մակարդակներում է «չօշափելի», որտեղ եւ՝ անցման այդ անտես վայրերում մշտահոլով կեանքը իր սաղմերն է թաքցնում... Աղանաձորի դարչնագոյնի, կանաչի ու դեղինի փարթամ գեղեցկութիւնը ամառուայ օրը հասցրել է փթթման բարձրակէտին, լոյսը հեղեղել է կեանքը, շերտութեամբ վարակուած հողը ծառը արմատից մինչեւ վերջին սաղարթը հագեցրել է կանաչի թանձրութեամբ, ազնիւ խոնջանքից բաւարարուած կեանքը միջօ-



բնոյթ է հաղորդում, գաղտնի մի շղարշով պատում: Նրա կտաւները աչքիդ առաջ գունային ճոխութիւններ կամ ձեւերի բազմազանութիւն չեն բացում. կտաւի մակերեսներին ծաւալում են մինի-մալիստական գունաձեւաւալներ՝ խիստ, երբեմն անշուք թուացող բնապատկերներ՝ ճիւղատարած մերկ ծառ, մեկուսացած քար, նատիւրմորտներ՝ նաւթավառ, սիստորներ կամ հողաթափեր եւ առտնին կեանքի նշաններ, բայց ինչպէ՞ս է խօսում նկարը մարդու հոգու հետ, ինչպէ՞ս է միտքը կլանում, ինքնասուզման տանում: Պատճառը մէկն

րէի հանգիստն է վայելում («Աղաւնաձոր»): Գոյնի այս թանձր շերտերը նօսրանում՝ բարակում են «Հայկական մոտիւ» բնանկարում, ուր հայեացքը միաժամանակ նոյն հարթութեամբ ընկալում է տարածութեան հեռաւորութիւնն ու մերձաւորութիւնը: Աշնան այգիները, մերկացող ձորերը, ջրափի կամ ճամփեզրի քարերը, բարալիկ թիւերը, դեղնադարչնագոյն լանդշաֆտները ջրաներկ վրձնահարուածները մէջ բանաստեղծական - քնարական շունչ են առել: Այս շարքի

Ո՞Ր ԵՆ ՅԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ, ՅԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՍՓԻՒՔԸ, ՎԱՏԻԿԱՆԸ...

ՈՍԿԱՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ

Ահա առաջին անգամ արտադրվել է Վատիկանի իր ցանկում, այսինքն էստի Իրաքեան Քրիստոսոստանի էրպիլ քաղաքը, ընկերակցութեամբ Գանատահայ ազգային գործիչ՝ Տոքթ. Տիգրան Աբրահամեանի, մօտէն ծանօթանալու համար Մոսկուէն (Նինուէ) բռնի արտաքսուած հայերու դժբախտ եւ սրտածախկն վիճակին:

Ծանօթանալէ ետք տեղահանուած գաղթական հայ ընտանիքներու, հետեւեալ եզրակացութիւնը կ'ընէ. «Մեր եղբայրներն ու քոյրերը զգում են իրենց լքուած Հայ Առաքելական Եկեղեցոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, Սփիւռքի հայ գաղթօճախներէրից, Մայր Հայրենիքից, որոնք զբաղուած են»

Առաջին անգամ չէ որ հայը լքուած եւ անտէր կը զգայ: Մեր պատմութիւնը լեցուն է նման արհաւիրից պատմութիւններով եւ սակայն այս դարուն՝ երբ քիչ թէ շատ վերականգնած ենք մեր հասարակական ընկերային կեանքը Սփիւռքի տարածքին, երբ ունինք ազատ, անկախ Մայր Հայրենիք եւ Պետականութիւն, երբ ունինք համայնավարութեան ճիւղերէնէն ազատ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ներքի չէ մեզի որ մնանք անտարբեր մեր կարօտեալ եղբայրներուն նկատմամբ, ըլլան անոնք Մոսկուէի, Պաղտատի, Հալէպի եւ Սուրիոյ ամբողջական տարածքին մէջ գտնուող եւ մահուան դէմ կռուող հարազատ հայորդիներ:

Ժողովրդային մեր անտարբերութիւնն ու անհոգութիւնը հասած է իր գագաթնակէտին: Բացարձակ ճշմարտութիւն է երբ կ'ըսեն, թէ «կրակը ինկած տեղը կ'այրէ»: Ուր են մեր Նուիրապետական Աթոռները: Հո՞ս ալ խտրութիւն պիտի դնենք, երբ թշնամիին սուրը կը ճօճուի մեր գլխուն վերեւ ամբողջ Արեւելքի տարածքին:

Իրաքի Առաջնորդական Թեմը կը պատկանի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, եւ հետեւաբար ակնկալելի է որ Մայր Աթոռը բարոյական պարտաւորութիւն ունենայ, եւ ունի՝ հոգալու իր հօտը: Բայց ո՞ւր է ան երբ հայորդիներ կը յօշոտուին արիւնարբու բարբարոսներուն կողմէ, եւ այդ՝ Իսլամութեան անուանով: Պահ մը դադարեցուցէք ձեր եսը շոյող շինարար-

րութիւնները եւ հասէք հոն ուր ժողովուրդը ձեր կարիքը ունի:

Ո՞ւր է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը որ այդքան մօտ է Իրաքին աշխարհագրականօրէն: Շատեր անմիջապէս պիտի առարկեն որ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը սուրիահայ տաճնապը ունի իր ձեռքին եւ չի կրնար հասնիլ այլ գաղութներու: Նման մտածողներ չարաչար կը սխալին. պէտք է հասնիլ ամէն տեղ ուր սուրը կը սպառնայ մեր գոյութեան: Պէտք կ'ա՞յ չի շեղելու որ տակաւին երէկ էր երբ միլիոններ ծախսուեցաւ Պիքիայի ամարանոցին մէջ, միաբանական նոր շէնքի մը կառուցման համար, այն ալ՝ մի քանի միաբանի համար, երբ քաջ գիտէնք որ ամբողջ Միջին Արեւելքը հայութեամբի օրհասական օրեր կ'ապրի: Որո՞ւ համար կը շինէք այդ շէնքերը, երբ նոր ցեղասպանութեան մը արհաւիրքը կ'ապրի հայութիւնը ամբողջ Միջին Արեւելքի տարածքին:

Երուսաղէմի Ս. Յակոբեանց Զինուորեալ Միաբանութիւնը իր տառապանքները ունի պաղեստինեան-իսրայէլեան ճակամարտներով: Արդեօ՞ք պիտի կարենայ ձեռք երկարել իր եղբայրներուն եւ քոյրերուն, ինչպէս անցեալին՝ 1946-47 թուականներուն, իսրայէլեան-արաբական պատերազմին տէր կանգնեցաւ տեղահան տարագրեալ հայերուն:

Դժբախտաբար Պոլսոյ Պատրիարքարանն ալ ունի իր խոչընդոտները, որովհետեւ այս բոլոր քաղաքական այլքներուն եւ փոթորիկներուն ետին կը կանգնի նաեւ Թուրքիան, Արեւմտեան աշխարհի իր պատմական «դաշնակիցներուն» հետ: Հակառակ այս քաղաքական դժուարին կացութեան, պատրիարքարանը աշխուժօրէն իր ձեռքը երկարեց, Քեսապէն ազատագրուած եւ Թուրքիա հասած հայորդիներուն եւ զանոնք պահեց ու խնամեց Վազըֆլի մէջ, մինչեւ ցնոր տնօրինութիւն:

Կը սիրենք յուսալ, որ մեր զոյգ պատրիարքութիւնները տիրող պայմաններու շրջանակին մէջ պիտի կարենան իրենց բարոյական եւ նիւթական գէթ խորհրդանշական գորակցութիւնը բերել ընդհանուր ճիգին:

Եւ վերջապէս ո՞ւր է Հայոց Պետականութիւնը: Ո՞վ տէր պիտի

կանգնի համասփիւռ հայութեան եթէ ոչ նոյն ինք Մայր Հայրենիքի Պետականութիւնը: Եթէ այսպիսի օրհասական օրերուն պիտի չկարենաք ձեռք երկարել եւ փրկել արաբական աշխարհին մէջ օրէ օր ընկողմող հայութեան նաւաբեկեալ բեկորները, հապա ե՞րբ ձեռք պիտի երկարէք: Ո՞ւր մնաց ձեր «Արի՛ տուն» լօզունգը...:

Եթէ Հայաստանի Պետութիւնը կը յաւակնի ըլլալ Ամենայն Հայոց Պետութիւն, եւ կառավարութիւնը Ամենայն Հայոց կառավարութիւն՝ ահա առաջին անգամ կ'ապրի փաստելու ատիկա: Պետութիւնը իր բովանդակ կշիռքովն ու հմայքովը պարտաւոր է գորաշարժի ենթարկել համայն հայութեան հոգեւոր, հասարակական կազմակերպութիւնները եւ ունեւոր դասակարգը: Վերջին հաշուով այս խնդրին մէջ նախաձեռնութիւն վերցնելը՝ պետութեան գերագոյն պարտաւորութիւնը պէտք է ըլլայ:

Գալով վատիկանին, տակաւին մի քանի օրեր առաջ արատալայտուելով Համաշխարհային Առաջին պատերազմի հարիւրամեակին առթիւ, Ֆրանսիա Պապ մասնաւորեց իր խօսքը երեխաներու մասին եւ կոչ ուղղելով ըսաւ. «Երեխաներ որոնք կը յուսային եւ կ'երագէին ունենալ պատուաբեր ապագայ մը՝ փշուռեցան ամբողջութեամբ: Ամէնուրեք կան մեռած երեխաներ, անդամահատուած եւ որբացած երեխաներ, երեխաներ որ չեն գիտեր ժպտալ: Կը խնդրեմ, կ'աղաչեմ ամբողջ սրտով, դադարեցուցէ՛ք սպանդը»: Եւ խնդրեց որ ներկայ բազմութիւնը իրեն հետ աղօթէ, որպէսզի Միջին Արեւելքի ղեկավարները իմաստութիւնը ունենան հետապնդելու խաղաղութիւնը երկխօսութեամբ: Եւ աւարտեց իր խօսքը ըսելով. «ամէն ինչ կորսուած է խաղաղութեամբ»:


Ուր են մեր կամակերպութիւնները, մասնաւորաբար Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը իր հսկայական նիւթական եւ մարդկային դրամագլուխով: Տակաւին շաբաթներ առաջ մամուլի մէջ կարդացինք որ Հ.Բ.Ը.Մ-ի ընդհանուր նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեանի մեկենասութեամբ նորոգուած է Էջմիածնի Կաթողիկո-

սարանի հին վեհարանը: Վեհափառի բառերով, «նրանք (տէր եւ տիկին Սեդրակեաններ) նույնպէս ցանկացան բարի չիշատակ ունենալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, որովհետեւ ապրել են Ս. Էջմիածնով եւ իրենց առաքելութեան մէջ միշտ կարեւոր տեղ է ունեցել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը»: Ինչո՞ւ սակայն այս պերճանքը, երբ Էջմիածնէն քիչ մը անդին, Կիւմրիի մէջ, երկրաշարժէն 25 տարիներ ետք, հայ ընտանիքներ տակաւին կ'ապրին անմարդկային պայմաններու՝ թիթեղածածկ տնակներու մէջ: Անտուններուն տուն շինեցէ՛ք, մարդ կերտեցէ՛ք...:

Տիար Սեդրակեան, Զեր իշխանական նուիրատուութիւնը կատարէիք արտասահմանի նաւաբեկեալ գաղութներէն ներս, մասնաւորաբար Միջին Արեւելքի մէջ, եւ ձեր անունը արձանագրուէր որպէս բարերար՝ իւրաքանչիւր երախտապարտ հայու հոգին մէջ: Ահա առաջին անգամ կ'ապրի արթնաք ձեր թմբիրէն, եւ լրջօրէն մտածէք վերաբանալ Մեկքոնեան Կրթական Հաստատութիւնը, ուր կարելի պիտի ըլլայ պատասպանել, պահպանել ու դաստիարակել ո՛չ միայն Սուրիայէն, այլեւ իրաքէն արտաքսուած հայորդիներ:

Այս օրերուն երբ Հայրենիքէն ներս պետական «լուրջ» ծրագիրներ կը մշակուին եւ կը կազմակերպուին ոգեկոչելու հայոց ցեղասպանութեան հարիւրամեակը, երբ համասփիւռ հայութիւնը գորաշարժի մէջ է կազմակերպելու հարիւրամեակի առիթով յատուկ միջոցառումներ, մոռցած ենք որ դէմ յանդիման կը գտնուինք նոր եղեռնի մը, արդիական բոլոր ձեւերով եւ միջոցներով:

Արթնցիր ո՞վ Հայ ժողովուրդ. Յեղասպանութեան հարիւրամեակներ իմաստ պիտի չունենան եթէ չկարենանք կանխել նորերը: Մեր գոյութիւնը կ'երաշխաւորուի միայն՝ մեր հաւաքական ոյժերով եւ մեր անշահախնդիր նուիրումով: Մեր Պետականութիւնը, Նուիրապետական Աթոռներն ու կազմակերպութիւնները, պարտաւոր են ունենալ յատուկ ծրագիր, թէ ո՞ւր պէտք է առաջնորդեն եւ համախմբեն հայութիւնը, առ նուազն յաջորդ յիսնամեակին, եւ չթողուլ զայն բախտի յորձանուտին:



ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ
(ՈՍԿԱՆԵԱՆ)

ԿԱՐՕՏԸ ՀԱՅԻ

ՔԱՆԱՏԵՎՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

2014

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

«ԿԱՐՕՏ ՀԱՅԻ»

ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Շնորհակալութեամբ ստացանք թերթիս աշխատակից Իրանահայ բանաստեղծ Ներսէս Տ. Մեսրոպեան-Պալայեանի քերթուածներու նոր հատորը «Կարօտը Հայի» 120 էջերէ բաղկացած, մաքուր տպագրութեամբ, Երեւան տպարանէն, Կրկնտէյլ:

«Կարօտ Հայի» հեղինակի քերթուածներու հինգերորդ ժողովածուն է, որու էջերուն մէջ ամփոփուած են հեղինակին վիշտն ու ցաւը, հոգեկան ապրումները եւ անսահման կարօտը իր հայրենիքին, իր մանկութեան օրերուն, իր հարազատներուն եւ ընկերներուն:

Կը շնորհաւորենք հեղինակը: «Մասիս»

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

www.massisweekly.com
Updated every Friday

ՈՒՒԼԻԱՄ ՍԱՐՈՅԵԱՆ ՍԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ


ԲԵՐՆԻ Ս. ՍԻԵԳԵԼ,
ԲԺԻՉԿ

Ես պէտք է սկսեմ ասելով, որ ես չեմ հաւատում, որ որեւէ գիրք կարող է փոխել ձեր կեանքը՝ միայն դուք դա կարող էք: Երկու հոգի կարող եմ են նույն գիրքը, մէկը ներշնչում է դրանից, միւսը՝ ձանձուրանում: Խնդիրը գիրքը չէ, այլ անձը, որը գոյութիւն ունի իւրաքանչիւրիս մէջ: Գրողի իմաստունութիւնը, միաւորուած ընթերցողի ներշնչանքին ու փոխուելու ցանկութեանը կարող են նրան ուղղորդել դէպի նոր կեանք:

Գիրքը, որ իմ կեանքում ամենակարեւոր նշանակութիւնն ունի Սարոյեանի «Մարդկային կատաղերգութիւնն» է: Երբ ես տառապում էի շատ խնդիրներով, յատկապէս՝ կորստի, որպէս բժիշկ հոգում եւ խորհրդակցում էի մարդկանց հետ, նրանց կեանքին վտանգ սպառնացող հիւանդութիւնների մասին, ես հանդիպեցի Սարոյեանի մի պատմութեանը, որը կոչում էր "Ճօճաձողով թուշող խիզախ երիտասարդը": Պատմութեան վերջում երիտասարդը մահանում է մտածելով դէպի Աստուծոն հասնող ճօճաձողի մասին եւ դառնում է "աներազ, անկենդան, կատարեալ": Դրանից յետոյ ես փնտրեցի ու գտայ Սարոյեանի բոլոր գրքերը:

Ինձ համար կեանքը տրագիկ կոմեդիա է: "Մարդկային կատաղերգութիւնում" Սարոյեանը գործունի կորստի հետ: Նովելն սկսում է, երբ Պր. Մակուլին մահացել է, իսկ նրա որդին՝ Մարկոսը, գնացել է պատերազմ եւ աւելի ուշ սպանւում է: Ինչպէ՞ս է ընտանիքը դիմակայում այս ցաւին:

Ես ցաւ տեսնում եմ շատ մարդկանց կեանքում, եւ յատկապէս նրանց մանկութիւնում: Ես ցաւ եմ տեսնում նրանց սրտերում, ովքեր մեծացել են լսելով, որ ձախորդ են եւ ոչ մի բանում յաջողակ չեն եւ միայն մուգ հագուստներ են կրում: Շատերը մեծացել են չսիրուած լինելու զգացումներով եւ իրենց ծնողներից լսելով խանգարող կարծիքներ, որոնք նրանց հասցրել են իրենց նկատմամբ անուշադրութեան: Մարդկային կատաղերգութիւնում Սարոյեանը մի ուսուցչուհի ունի, որը խօսում է իր ուսանողի հետ եւ



ասում նրան այն ինչի կարիքը մենք բոլորս ունենք լսելու, որ դիմակայենք՝ յարգենք միմեանց անգամ, երբ մենք չենք սիրում իրար, սիրենք ճշմարտութիւնը եւ յարգենք, չլինենք նման, բայց լինենք մարդկային մեր իւրօրինակութեամբ եւ ուշադրութիւն չդարձնենք նրանց, ովքեր կը փորձեն մեզ հետ պահել եւ շփոթեցնել: Սրանք ընկալման առարկաներն են, որոնք մենք կարիք ունենք լսել մեր ծնողներից, ընկալման առարկաներ, որոնցով մենք կարիք ունենք ապրել:

Թերեւս ինձ համար Սարոյեանի գրքում ամենակարեւոր խօսքերը սրանք էին "Բայց փորձիր յիշել, որ լաւ մարդը երբեք չի կարող մեռնել... Անձը մարդուց կը հեռանայ կամ կը վերցուի նրանից, բայց լաւ մարդու լաւ կողմը կը մնայ: Այն կը մնայ յաւատ: Մէրն անմահ է եւ ամէն ինչ դարձնում է անմահ": Այս խօսքերը եւ միտքը, որ երբ մենք հեռանում ենք մեր մարմնից, մենք կրկին կատարեալ ենք դառնում, ինձ պահպանել է կորստի միջով անցնելուց: Իմ փորձով ես հաւատում եմ՝ դրանք ճշմարտութիւնն են ասում:

Սարոյեանը իմաստունութեամբ է գրում: Նա գիտի ինչ ես սովորեցի. "Բժիշկներն ամէն ինչ չգիտեն... նրանք հասկանում են նիւթը, ոչ՝ հոգին": Բժշկական գիտութիւնը ճշմարիտ գիտութիւն չէ: Դա աւելի տեղեկութիւն է եւ նիւթ եւ հոգու մասին չէ եւ ոչ էլ իրական աշխարհի, որտեղ մարդիկ գոյատեւում են: Սարոյեանն ունի տիկին Մակուլի, որն իր տղաներից

մէկին ասում է, որ ամէն ինչ մեր մի մասն է եւ մենք պէտք է Աստուծոն շնորհակալ լինենք դրանց համար: Նա Մարդկային կատաղերգութիւնը լցնում է իմաստալից պատգամներով: Չար մարդը պէտք է ներուի եւ սիրուի, որովհետեւ մեզնից ինչ որ բան նրանում է եւ նրանից ինչ որ բան մեզանում: Մենք պէտք է տանք ամէն ինչ ինչ մենք ունենք, որովհետեւ, եթէ մենք գողին տանք, նա չի կարող գողանալ մեզանից եւ այլեւս նա գող չի լինի, եւ որքան շատ մենք տանք, այնքան շատ կ'ունենանք տալու: Մենք չպէտք է վախենանք բոլոր հրաշալի սխալներից, որ մենք կ'անենք: Նշանակութիւն չունի թէ սխալներն ինչպիսին են, մենք պետք է չվախենանք դրանք անելուց կամ աւելի շատ սխալներ անելուց:

Եթէ իւրաքանչիւր երեխայ մեծանար այն խօսքերով, որոնք ասում են Մարդկային կատաղերգութիւնում, աշխարհը շատ տարբեր կը լինէր:

Վերջինը՝ բայց ոչ նուազ կարեւորը գրքում, դա մի տեսարան է, որտեղ փոքրիկ Յուլիան Մակուլին մի սենյակ տեսնում եւ նրա եղբայր Հոմերը ասում է նրան. "Վերցրու դա, Յուլիան, դա յաջողութեան նշան է: Միշտ պահիր այն": Ես միշտ հաւատացել եմ, որ ես ճիշտ ուղու վրայ եմ: Մի անգամ, ես Սարոյեանի աղջկայ հետ էի խօսում եւ նա ասաց, որ իր հայրն էլ այդպիսին էր եւ եթէ մի սենյակ տեսնէր փողոցում, երթեւեկութեան միջով կ'անցնէր այն վերցնելու համար: Ինձ համար ամենամեծ նշանը քսանվեց սենյակ գտնելն էր, երբ ես պիտի մասնակցէի քսանվեց մղոնանոց մարաթոնի: Դա Աստուծոյ կողմից ուղարկուած մի նշան էր, որ ես կը յաղթահարեի այն:

Ինչո՞ւ: Որովհետեւ այդ սենյակն ամէն ինչ ասում է: Աստուծոն եմք Մենք Վստահում եւ մենք ունենք

ագատութիւն լինելու այն առանձնայատուկ եւ իրական անձը, որ մենք ցանկանում ենք լինել եւ ոչ թէ այն՝ ինչ ուրիշներն են հարկադրում լինել, եւ այնտեղ է Աբրահամ Լինկոլնը, նայում է արեւելք, որտեղից արեւն է ծագում, որպէսզի նա չտեսնի որեւէ ստուեր եւ նա լուռ է՝ առանց ժպիտի: Կ'ապրէր նա այլ կեանք, եթէ իմանար ինչ էր սպասում իրեն իր կեանքում:

Ես սովորել եմ ընդունել իմ մահկանացու լինելը եւ կը սիրեմ այն մինչեւ յոգնեմ իմ մարմնից: Այդ ժամանակ ես կը հեռանամ եւ կը դառնամ կատարեալ եւ անմահ:

ԲԵՐՆԻ Ս. ՍԻԵԳԵԼ, բժիշկ հեղինակ է Love, Medicine & Miracles եւ այլ շատ խոպանը հերկող գրքերի՝ մարդկային մտքի եւ կամքի բուժիչ ուժի, ներառեալ՝ Ինչպէս «Ապրել Բժշկական Այցելութիւնների Միջեւ», «Ապրելու Դեղատոմսեր եւ 101 Վարժութիւններ Հոգու Համար»: 1978թ-ին նա ստեղծել է Քաղցկեղի Բացառիկ Հիւանդների Թերապիայի մի ձեռնարկագրութեամբ հիվանդների նկարները, երազները, պատկերները եւ զգացմունքները: ՔԲՀԹ-ն Հիմնուած էր "հոգածութեան համադրուած" ապահով, քնքուշ թերապիա-տիկ առերեսմամբ, որը հեշտացնում է անձնական զօրացումն ու բուժումը: Որպէս բժիշկ Բերնին ընդունում է ապրելու եւ մահուան փրկիստիպարութիւնը, որը կանգնած է մեր հասարակութեան բժշկական եւ հոգեւոր խնդիրների պայքարի առաջնագծում: Նա եւ իր կինը՝ Բոբին, ապրում են Կենտրոնական հանագի Նիւ Հեյվընի մի արուարձանում, որտեղ նրանք ունեն հեղինակակից գրքեր, յօդուածներ եւ հինգ երեխայ:

Անգլերէնից թարգմանեց՝ Կիմա Կիրակոսեանը, "The Book That Changed My Life" գրքից:

Հայկական բանակի խոշոր յաջողութիւնը

Շաբաւակուած էջ 2-էն

անյաջողակների պլանաւորած գործընթացների թիրախներից մէկը դառնալու է հայկական բանակը: Բայց արդէն աւելի հաւանական է ոչ թէ ռազմական, այլ այսպէս ասած «քաղաքական» բնոյթի հարուածներով:

Ընդ որում, դա միանգամայն օբիեկտիւ իրողութիւն կը լինի, ելնելով այն հանգամանքից, որ

բանակը ներկայացրել է ռեզիոնալ ուժի կենտրոնի գործնական յայտ, եւ դա նշանակում է ոչ միայն պոտենցիալ դաշնակիցներ, այլ նաեւ պոտենցիալ մրցակիցներ ու անգամ հակառակորդներ: Այդ իրողութեան արդիւնքը կամ հետեւանքը կարուած է լինելու այն բանից, թէ բանակը որքանով է պատրաստ լինելու այդ զարգացումներին:

«ԼՐԱԳԻՐ»

Ինչքանով է հնարաւոր պատերազմ

Շաբաւակուած էջ 2-էն

մասններից դուրս: Օրինակ, Գերմանիայում տարբեր ծրագրի շրջանակներում Ղարաբաղի թեմայով կազմակերպւում են բազմաթիւ կլոր սեղաններ, ֆորումներ, քաղաքական քննարկումներ, որոնց ակտիւ մասնակցում են ատրպէյճանցի ուսանողները եւ որոնց միաժամանակ ակտիւ ուղեկցում են ատրպէյճանցի հմուտ փորձագէտներ՝ դեսպանատներին եւ այլ կարեւոր հաստատութիւններին, ինչը մեր պարագայում նույն կերպ չի գործում՝ շատ յաճախ ժամանակ չունենալով նման հանդիպումների համար: Քաղաքակրթութեամբ զբաղեցող ակտիւ երիտասարդները պէտք է արտասահմանում նման կանդիդատներին ժամանակ օժանդակութիւն ստանան հայ հմուտ փորձագէտներ

րից՝ աւելի հիմնաւոր եւ լուրջ փաստերով իրականութիւնը միջազգային հանրութեանը ներկայացնելու համար:

Իսկ արտասահմանում գտնուող մեր քաղաքագէտներին խորհուրդ է տրուում Ղարաբաղի թեմայով հնարաւորինս շատ գիտական աշխատանքներ գրել, քանի որ գրադարաններում չափազանց շատ են օտարալեզու ատրպէյճանամէտ գրքերը: Իսկ եթէ միջազգային հանրութիւնից որեւէ մէկը փորձում է որեւէ աշխատանք գրել, յղումներ է կատարում նման գրականութեանը՝ մեխանիկորէն ընդլայնելով եւ տարեկանով ատրպէյճանական հիմնաւորումները՝ այճանական հիմնաւորումները՝ այդպէս ստեղծելով եւ տարածելով ատրպէյճանական «պատմութիւն»:

«ՀՆՏԳ»

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՓՈՔՐԵՐՈՒ ՄՕՏ ՉԱՓԱԶԱՆՑ ԸՆՀՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՐԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

Ճնշուածութիւնը, որքան ալ սաստիկ ըլլայ, ժամանակաւոր եւ անցողական է: Փոքրերու պարագային չափաւոր ճնշուածութիւնը կը նպաստէ սորվելու, ընտելանալու եւ յարմարելու դժուար կացութիւններուն: Սակայն տեւական ճնշուածութիւնը (Chronic Stress) կրնայ յարատեւ գոյատեւող ժխտական հետեւանքներ ունենալ փոքրիկին վրայ: Մշտական ճնշուածութեան օրինակներէն են՝ աղքատութիւնը, ֆիզիքական եւ հոգեբանական չարաչառութիւնը եւ ծնողի կոռուստը:

Վերջերս Ուիսքոնսին-Մէտիսըն համալսարանի հետազոտական խումբը շնորհիւ իր կատարած ուսումնասիրութեան յայտնաբերած է թէ կեանքի առաջին տարիներուն չափազանց եւ տեւական ճնշուածութիւնը կրնայ փոփոխութեան ենթարկել փոքրիկին ուղեղի այն մասերը որոնք պատասխանատու են՝ սորվելու, յիշողութեան եւ ճնշուածութեան ու այլ զգացումներու կառավարման: Այս փոփոխութիւնները կրնան ժխտական ազդեցութիւններ ունենալ փոքրիկին վարուելակերպին, առողջութեան եւ ընկերային յարաբերութիւններուն վրայ:

Հետազոտութեան հեղինակներէն՝ Սէդ Փոլաք դիտել կու տայ թէ

մանկութեան ընթացքին պատահող կարգ մը ճնշիչ փորձառութիւններ կրնան իրենց յարատեւ հետքերը ձգել անհատին կեանքին վրայ, վնասելով անոր թէ՛ հոգեկան եւ թէ՛ ֆիզիքական առողջութեան: Ըստ Փոլաքի նոյնիսկ երկու կամ երեք տարեկանի ճնշուածութիւնները կրնան վատ հետեւանքներ ունենալ ապագային:

Նախապէս կատարուած հետազոտութիւններ ցոյց տուած են թէ մանկութեան լուրջ ճնշուածութիւնները առնչուած են ընկճուածութեան (depression), անձկութեան (anxiety), սրտի հետ կապուած անհանգստութիւններու եւ քաղցկեղի: Biological Psychiatry ամսաթերթին համաձայն՝ այս ուսումնասիրութեան մաս կազմած են 128 փոքրեր: Գիտնականներ հետեւած են այս փոքրերու ուղեղային աճման ընթացքին, ինչպէս նաեւ՝ անոնց հոգեկան առողջութեան եւ ճնշուածութիւններուն:

Հետաքրքրական է, որ գիտնականներ յայտնաբերեցին թէ ճնշուածութեան ենթարկուող փոքրերու մօտ բաւական փոքր են ուղեղի այն մասերը որոնք պատասխանատու են զգացումներու ըմբռնման եւ արտայայտման (amygdala), ինչպէս նաեւ սորվելու եւ յիշողութեան (Hippocampus):

ՀԱՅ ԿՆՈՋ ԷՁԸ

Օրը հաճելիօրէն սկսելու հինգ ձեւ

Գիտականօրէն ապացուցուած ձեւեր, որոնք կը նպաստեն ձեր օրը աւելի հաճելիօրէն սկսելուն:

- Առաւօտեան սուրճը խմելու ընթացքին սեղանին փոքրիկ ծաղիկ դրէք:

Հոգեբանները կը կարծեն, որ ծաղիկներու կամ առհասարակ բոյսի գոյութիւնը ենթագիտակցօրէն անվտանգութեան զգացում կը յառաջացնէ: Մարդ ենթագիտակցօրէն կը մտածէ, որ եթէ տուեալ վայրին մէջ ծաղիկը կ'աճի, ուրեմն կարելի է այդտեղ «արմատներ նետել»: Այսպիսով, փոքրիկ ծաղիկներուն զոյգութիւնը առաւօտեան կը ստիպէ հաւատալ, որ օրը յաջող պիտի ըլլայ:

- Քնացէք աջ կողմի վրայ:

Ըստ գիտնականներու՝ աջ կողմի վրայ քնանալը կ'ազդէ երազներու վրայ: Անոնք պարզած են, որ աջ կողմի վրայ քնացող մարդիկ աւելի հաճելի երազներ կը տեսնեն՝ թեթեւութեան, ուրախութեան, խաղաղութեան եւ սիրոյ զգացումով:

որմէ ետք կ'արթնան աւելի լաւ զգացումով եւ կ'ըլլան աւելի առոյգ:

- Մէկ գաւաթ նարինջի հիւթ խմեցէք:

Բացի այն, որ նարինջը կ'արտադրէ առաւօտեան գոյնն ու տրամադրութիւնը՝ նման ըլլալով արեւուն, անիկա նաեւ հարուստ է B6 կենսանիւթով:

- Մէկ ժամ կանուխ քնացէք:

Երբ մարդ կը կորսնցնէ քնանալու ժամանակը, ան կը կորսնցնէ նաեւ կատակելու զգացումը: Ինչպէս կը բացատրէ Հարվըրտի բժշկական դպրոցի փրոֆէսըր մը՝ յազեցած քունի պակասը կը խոչընդոտէ զգացումները ճիշդ ընկալելը:

- Մարգանք ըրէք:

Քանի մը թեթեւ վարժութիւնները պիտի ստիպեն սրտին աւելի թեթեւ աշխատելու ամբողջ օրուան ընթացքին: Հետաքրքրական է, որ հինգ վայրկեան մարտնչումները բնութեան գրկին մէջ պիտի բարձրացնեն տրամադրութիւնը:

ԿԻՆԵՐԸ ԻՆՉ ԿԸ ԳՆԱՀԱՏԵՆ ՏՂԱՍԱՐԴՈՑ ՄԷՋ

Իւրաքանչիւր կնոջ համար իր տղամարդը միակն է ու ան կրկնելի: Բայց անոնք ամենաշատը ինչ կը գնահատեն իրենց ընտրելովին մէջ, ինչը աւելի կարեւոր կը համարեն տղամարդուն մէջ՝ լաւ բնավորութիւն, նիւթական հնարավորութիւններ, փոխըմբռնում, յուսալիութիւն, լաւ սիրեկան...:

Կիններուն մեծամասնութիւնը կը կարծէ, որ տղամարդուն մէջ պէտք է այս բոլոր որակները ըլլան: 16 տոկոսը կը գնահատէ փոխըմբռնող ու յուսալի տղամարդիկ: Շատերու համար կարեւոր է, որ տղամարդը անկողնի մէջ «լաւ» ըլլայ, շատեր ալ վստահ են, որ

զլխաւոր որակներէն մէկը լաւ բնավորութիւնն է:

Կինները յարաբերութիւններու մէջ անշահախնդիր են. անոնց միայն 4 տոկոսը կարեւոր կը համարէ տղամարդուն նիւթական կարողութիւնները: Տղամարդուն որակներէն կինները կը գնահատեն նաեւ խելքը, պարկեշտութիւնը, սիրելի կնոջ սիրելու եւ հասկանալու ունակութիւնը:

Բայց ամէնէն կարեւորը այն է, որ մենք զանոնք կը սիրենք. կը սիրենք այնպէս, ինչպէս որ են՝ իրենց թերութիւններով ու առաւելութիւններով հանդերձ՝ ակնկալելով փոխադարձ վերաբերմունք:

ԻՆՉԵՆ ԿԸ ԲԱՐԿԱՆԱՆ ԿԻՆԵՐՆ ՈՒ ՏՂԱՍԱՐԴԻԿԸ

Կիներն ու տղամարդիկ կը բարկանան տարբեր բաներէ:

Յարաբերութիւններու մէջ ներդաշնակութիւն գտնելը բարդ է: Ինչպէ՞ս ամրացնել յարաբերութիւնները կնոջ կամ ամուսինին հետ ու կարենալ պահպանել զանոնք: Մշտապէս ստիպուած կ'ըլլանք համակերպելու որեւէ բանի հետ կամ հակառակը՝ պատերազմելու տղամարդու սովորութիւններուն դէմ:

Օրինակ՝ համեղ ճաշէն կամ թեթեւ ընթրիքէն ետք սպասները կը հաւաքուին, որ, հասկնալի է, կինը պէտք է հաւաքէ: Իսկ միթէ դժուար է գոնէ պնակը սեղանէն վերցնել: Այդ պահուն կ'ուզեն մասնատել ամուսինը: Նոյնպիսի իրավիճակներ կ'ըլլան, երբ տղամարդը կը փափաքի վարուել նոյն կերպով:

Եկէք պարզենք, թէ տղամարդոց մէջ ինչը կը բարկացնէ կանանց եւ հակառակը, ինչպէս ընտանիքը փրկել բաժանումէ: Ատիկա անհրաժեշտ է գոյգին յարաբերութիւնները ամրացնելու համար:

Անհրաժեշտ է նշել, որ տղամարդուն կը բարկացնէ, երբ սիրելին կը սկսի ձանձրացնել «գուշակէ, թէ ինձի համար ինչ գնած եմ» կամ «որուն տեսած եմ այսօր» եւ նման այլ հարցերով: Տղամարդու զլխուն մէջ արդէն իսկ շատ գործ կայ. ինչպէ՞ս կարենալ հանդիպիլ ընկերներուն, այսօր ժամը քանի ինչ է ֆութպոլը, ինչպէ՞ս է ինքնաշարժի վիճակը: Իսկ զայն կը նեղացնեն այդպիսի «յիմար» հարցերով: Ան չի հասկնար, թէ ինչու հնարաւոր չէ ամէն ինչ պատմել այնպէս, ինչպէս եղած է՝ բաց ձգելով հարց-հանելուկները: Յարաբերութիւններու մէջ այդպիսի հարցերը կը բարկացնեն:

Խորհուրդ տղամարդոց. դադարեցէք արձագանգել նման հարցերուն:

Խորհուրդ կիններուն. պարզեցուցէք ձեր խօսքը եւ դադարեցէք հանելուկներով խօսել:

Հետեւելով այս խորհուրդներ-

րուն՝ դուք ներդաշնակութիւն պիտի հարդրէք յարաբերութիւններուն:

-Ձգալուծութիւն եւ արցունքներ Ահա եւս մէկ խորհուրդ կիններուն: Եթէ դուք որեւէ բանէ յուզուած էք եւ կը փափաքիք լալ, լաւ պիտի ըլլայ ատիկա ընել ընկերուհիներու կամ մայրիկին մօտ: Տղամարդիկ բոլորը կը համեմատեն իրենց հետ եւ չեն հասկնար, թէ ինչպէս կարելի է անհեթեթութեան համար լալ: Այդ պատճառով սիրելիին արցունքները տղամարդուն վրայ վատ ազդեցութիւն կ'ունենան, իսկ եթէ աւելի յստակ ըսենք՝ կը բարկացնեն զիրենք:

-Ձանձրացնող պտոյտներ խառնութիւններու մէջ Խառնութիւն կարելի է երթալ կա՛մ առանձին, կա՛մ ընկերուհիներու հետ: Տղամարդիկ մի տանիք ձեզի հետ: Ատիկա անոնց համար իսկական փորձութիւն է: Երկուքդ ալ դժգոհ պիտի մնաք, իսկ յարաբերութիւնները աւելի ամուր կը դառնան զիրար հասկնալու շնորհիւ:

-Կին գործընկերներ Խորհուրդ յատկապէս տղամարդոց. երբեք ձեր կիններուն մի պատմէք այն աղջիկներուն մասին, որոնց հետ միասին կ'աշխատիք, կամ այն խանութի վաճառողուհիին մասին, ուր դուք յաճախ կ'այցեցէք: Կիններուն մօտ յաճախ նախանձի զգացում կը յառաջանայ: Եւ վէճէն բացի, ատիկա այլ բանի չի յանգեցնէր: Եզրակացութիւնը նոյնն է. պատմեցէք, բայց կիններու անուններ մի օգտագործէք: Եւ դուք պիտի կրնաք պահպանել ձեր կնոջ հետ յարաբերութիւնները:

-Բամբասանքներ ու հեռախօսային զրոյցներ Ինչ կը վերաբերի ընկերուհիներու հետ հեռախօսազրոյցներուն, ուստի կանայք պէտք է ատիկա ընեն այնտեղ, ուր տղամարդ չկայ, որովհետեւ անոնց կը խենթացնեն անվերջ զրոյցներն ու բամբասանքները: Հետեւելով այս խորհուրդին՝ ձեզի համար դիւրին պիտի ըլլայ ամուր յարաբերութիւններ կառուցել:

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ
Հոկտեմբեր 3, 2014
ՆԱՄՍ ԵՒ ԱՐՍԵՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱԾԻՂ

Գրաւուած օր
Նոյեմբեր 15, 2014
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
60 Ամեակի Շքեղ հանդիսութիւն

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք
«Մասիս» Շարաքաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ

Պրն. Երուանդ Պապայեանի մահուան տխուր առիթով, Լոս Անձելոսի Այնթապցիներու Մշակութային Միութեան վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին կեանքի ընկերջ՝ Տիկին Ռոզինին, զաւակներուն եւ թոռներուն, Այնթապցի Հայրենակիցներուն եւ համայն հայութեան:

Պրն. Պապայեան իր ամբողջ գիտակցական կեանքը եւ մտաւոր կարողութիւնը նուիրած է Հայ դպրութեան, հայ մշակոյթին եւ իր ազգին: Եղած է երկամեայ վաստակաւոր դաստիարակ եւ տնօրէն, եռանդուն բանխօս, բազմաթիւ գիրքերու եւ յօդուածներու հեղինակ եւ օրինակելի հայորդի: Ան հայրենասիրութիւն եւ ազգասիրութիւն սերմանած է բազմաթիւ սերունդներուն:

Ան առաջին օրէն եղած է մեր վարչութեան գլխաւոր հիմնադիրը եւ նախագահը եւ մեծ հմտութեամբ ղեկավարած է մեր վարչութեան գործունէութիւնները: Այնթապցիներու Մշակութային Միութիւնը իր ղեկավարութեան տակ, արժանացած է թոյր հայրենակցական Միութիւններու յարգանքին եւ հիացմունքին:

Ան հպարտ էր իր Հայրենի Այնթապ քաղաքով, եւ մեծ ոգեւորութեամբ կը վերջիւնէր պատանի տարիքին իր բերած համեստ մասնակցութիւնը Այնթապի հերոսական ինքնապաշտպանութեան:

Երկար տարիներ ծառայած է Հայ Մամուլին իր բովանդակալից եւ իմաստուն յօդուածներով, յուշագրութիւններով: Գնահատած եւ քաջալերած է Հայ երիտասարդ տաղանդները, տարածած է հայ մշակոյթը, աստար կանգնած է սփիւռքի հայրենիք ամուր կապերուն: Իր աշխոյժ մասնակցութիւնը բերած է հայրենիքի «Նոր Այնթապ» ավանի հիմնադրութեան եւ անոր մէջ կառուցուած ժանտակի գործարանին եւ հերոսամարտի նուիրուած յուշարձանին: Երջան մը խմբագրած է «Նոր Այնթապ» տարեգիրքը, Պէյրութի մէջ: Ամերիկա հաստատուելէ ետք (1968) ան շարունակած է յօդուածներով իր մասնակցութիւնը բերել սոյն տարեգիրքին: Պրն. Պապայեանի գլխաւոր գործերէն մէկն է Այնթապի Պատմութեան լայնածաւալ Յրդ հատորը (1993 թ.):

Հայ ժողովուրդը, մասնաւոր աչք ապացիները հպարտօրէն պիտի չի չեն անոր վաստակաւոր ծառայութիւնները: Կ'աղօթենք որ իր չիշատակը անմար մնայ ամէն անոնց սրտերուն մէջ, որոնք վայելած են իր ներկայութիւնը, օգտուած են իր ծառայութիւններէն եւ արժանացած են իր հոգատարութեանը:

Կը խոնարհինք իր սիրելի չիշատակին, թող Աստուած լուսաւորէ իր հոգին:

Լոս Անձելոսի Այնթապցիներու Մշակութային Միութեան վարչութիւն

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՍԵՊՈՒՀ ԱԲԳԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն վաստակաւոր ուսուցիչի, խմբավարի եւ երաժիշտի բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Մելգոնեան Կրթական Հաստատութեան նախկին սաներուն, Կիպրահայութեան, «Գոհար» համոյթի անձնակազմին եւ իրաւաբան ընտանիքին:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ԱՐՇԱՆՈՅՍ ԳԱԶԱԶԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վարդան եւ Լուսին Լիպարիտեանին:

«ՊԱՔՈՒՆ ՓՈՐՁՈՒՄ Է ՕԳՏՈՒԵԼ ...»

Շարունակուած էջ 6-էն

կատարուել է Թուրքիայի կողմից, վաղեմութեան ժամկէտ չունի: Անշուշտ, 100-րդ տարելիցը Հայաստանն ու Սփիւռքը պէտք է օգտագործեն՝ Հայ Դատի լուծման մէջ մէկ քայլ առաջ գնալու համար եւ, կրկին պարզ է, որ պաշտօնական Անկարան ու էրզրոզանի հայատեաց կառավարութիւնն ամէն ինչ անելու են մեր ծրագրերը խափանելու համար: Այն, որ Թուրքիան ամէն կերպ աջակցում է Ատրպէյճանին, երբեք էլ մեզ համար նորութիւն չի եղել: Այն, որ մշտապէս ցանկանում են լարուած պահել իրավիճակը, կրկին քննարկման ենթակալ է: Այստեղ աւելի կարեւոր է, թէ մենք՝ իբրեւ պետութիւն եւ հասարակութիւն ինչ պէտք է անենք՝ նման ոտնձգութիւններին դիմակայելու համար: Առաջինը, ըստ ՄԳՂԿ-ի, պէտք է յետ կանչել հայ-թուրքական իրադասական արձանագրութիւնները մեր խորհրդարանից: Եթէ իշխանութիւնները ուզում էին հասնել նրան, որ ողջ աշխարհը հաս-

կանայ, թէ հաշտեցմանը դէմ է Թուրքիան, կարծում եմ հասել են դրան: Հիմա այլեւս դրանց գոյութիւնը ոչ միայն անհիմաստ, այլ նաեւ ստեղծուած լարուած իրավիճակում ստորացուցիչ է: Ինչ վերաբերում է բուն հարցին, ապա պարզ է, որ անգամ պետական ահաբեկչական դիւերսիւիաները, որ կատարուում են սահմանին Ատրպէյճանի կողմից, հովանաւորուել եւ հովանաւորուել են Անկարայում: Պաքուս առանց Անկարայի նման է անատամ ու փոքրիկ շնիկի, որ միայն հաչել գիտի՝ չնայած վերջին 20 տարիներն ապացուցեցին, որ անգամ Թուրքիան չկարողացաւ Ալիւելի եւ իր կլանի բերանն ատամ դնել: Այստեղ ամենամեծ ողբերգութիւնը գոհուած հայ բանակալիններն են, որոնք սրբօրէն կատարել եւ կատարում են իրենց պարտքը Հայրենիքի առջեւ - Պետութիւնը կարեւոր ինդիք ունի կատարելու այդ մարդկանց ընտանիքներում: Միայն մեղալ տալը բաւարար է, պէտք է նաեւ ցոյց տալ, որ մենք տէր ենք

ՍԱՐՄԱՆԻՆ ԿԱՆԳԱԾ ԿՍՅ ԶԻՆՈՒՈՐԸ

Շարունակուած էջ 6-էն

ցումներով արտայայտուելը նոյնիսկ մեղաւորութիւն է : Բայց ընդհանուր մթնոլորտ մը կայ, որ Ատրպէյճան պատրաստ է պատերազմի: Նախ անոր համար որ Ալիւելին համար ձեռնառու է պատերազմը, իսկ վերջին օրերու ապտակը նաեւ ցոյց կու տայ, որ Ատրպէյճանի «հարուստ» բանակը ինչ խեղճ դրութեան մատուցեալ: Զոհերէն զատ կայ նաեւ իսախառակութիւնը: Այս տուելաները եթէ նժարի վրայ դնենք, ուրեմն ոչ Ալիւել եւ ոչ ալ իր ճիրաններուն տակ գործող բանակը պատրաստ են որեւէ լուրջ քայլերու:

Գուցէ Հայաստանն ալ պատրաստ է: Մէկ տարբերութեամբ, որ Հայաստանի համար որեւէ պատերազմի տխուր ավարտ կրնայ անդառնալի հետեւանքներ ունենալ: Այո՛ Հայաստան տեղ չունի նահանջի: Որովհետեւ որեւէ նահանջ մահ կը նշանակէ:

Մտահոգիչն այն է, որ Հայաստան իր երեք նախագահներով, իր իշխանութիւնը - ընդդիմութիւն վէճերով, իր ուսուակուն կամ եւրոպական արեւելուցով, իր Մոսկուա կտոր մը սեւ հացի համար վագոզ որդիներով, եւ հազար ու մի մարմիններով չկրցաւ վերաբնակեցնել սահմանային շրջաններուն մէջ եղած տարածքները: Հակառակ անոր որ, բոլորը լաւ գիտեն որ հայ զինուորին թիկունքին ամրացման առաջին խնդիրը ոչ թէ անոր լաւ մատակարարումն ու մարտական ոգին բարձր պահելով կ'ըլլայ միայն, այլ նաեւ անոր կունակը ամուր պահող բնակչութեամբ:

Պատմական հայրենիքը զերազատող սփիւռքն ալ այս քսան տարուան մէջ չստիպեցաւ մտածել ապրող Հայաստանի իրա կան եւ ոչ երեւակայական սահմաններուն մասին: Քսան տարուան մէջ Սփիւռքին համար գերխնդիր է Հայաստան երթալ ժողով ընելու համար, Հայաստան երթալ խորոված ուտելու համար: Իսկ քսան տարուան Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու Չախճախի մեծամասնութիւնը իր առջեւ դրաւ մէկ խնդիր, «Ոնց անեմ աւելի փող աշխատեմ», «Ոնց անեմ ամրանը աւելի գեղատեսիլ լողափ հասնեմ», եւ «Ոնց անեմ աւելի

սիրուն տաշա կառուցեմ»: Այս վիճակներուն մէջ գտնուեցաւ մէկ տուեալ, որ պահեց ու տակաւին կը շարունակէ պահել Հայաստանի իրաւական, հոգեբանական ու մանաւանդ ֆիզիքական սահմաններն ու անվտանգութիւնը: Եւ այդ պահողը եղաւ սահմանին վրայ կանգնած հայ զինուորը:

Պատերազմի վտանգներուն մասին ամէն օր կը գրուի: Կը գրուի նաեւ հայոց բանակին պատրաստակամութեան, անոր ձեռք ձգած մարտունակութեան եւ ամենակարեւորը անոր ժառանգութեամբ փոխանցուած բարձր ոգին մասին: Այդ ոգին, ոչ ընտիր ճաշերով կը սնուցանուի, ոչ վայելուչ համազ գետտներով, ոչ հանգստաւտ անկողիններով ոչ ալ արդիական գորա նոցներով:

Ոգին որուն կ'ակնարկեմ մարդու խորքին մէջ հաստատուած, անոր երակներէն հոսող արեան մէջն է: Առանց այդ ոգին աշխարհի ամէնայն ընտիր գէնք ունեցող բանակն անգամ կը պարտուի:

Ամէնայն նոր օրինակը Իսրայէլի բանակն է, որուն մասին կ'ըսուի, թէ աշխարհի հզօրագոյն չորրորդ բանակը ունի: Սակայն իսրայէլեան բանակը այսօր անկարող է կազմն գրաւել ու ատոր դիմաց ամէն իսրայէլեացի միջոց կ'օգտագործէ արեան մէջ խեղդելու համար պաղեստինացի անգէն ժողովուրդը պատրուակելով, որ «Համաս» իսրայէլ բնակիչները իրեն որպէս մարդկային վահան (Human Shields) կը գործածէ:

Ուրեմն այսօրուան գերագոյն արժէքը հայ զինուորին նուիրուածութիւնն է ու վստահ եմ, որ Սփիւռքն ալ գիտէ այս մէկը:

Յեղասպանութեան ճանաչման օրակարգը, Զաւախքի հայութեան խնդիրները, Հայէպն ու Մոսկուա կարեւոր են: Կարեւոր է նաեւ Քեսապը:

Բայց պատմութեան ընձեռած այս վերջին Հայաստանի սահմաններուն ապահովութիւնը անսակարկելի է: Այդ սահմանները, ոչ միայն հայ ժողովուրդի ֆիզիքական բերդին պարիսպներն են, այլ անոր ոգեղէն գոյութեան հիմնական գէնքերը: Առանց այդ բերդերուն մեր գոյութիւնը կը դառնայ անհիմաստ: Այդ բերդերու կորուստով մենք, անխնայաբար կրակած կ'ըլլանք մեր գոյութեան վրայ: Կրակած ու դարձուցած կ'ըլլանք մեր պատմութեան վերջին էջը:

տարածայնութիւնները:

Որպէս աւանդական կուսակցութիւն՝ ՍԳԿ-ն ինչ քայլեր է ձեռնարկում ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ Կայկական հարցը ակտիւացնելու ուղղութեամբ:

Սփիւռքում տարուող հայկական լոբբիստական աշխատանքների մի ստուար մասը ծանրացած է Հնչակեան կուսակցութեան վրայ՝ չնայած մենք այդ մասին միշտ էլ, որ բարձրաձայնում ենք: ԱՄՆ-ի տարբեր համայնքներում ՄԳՂԿ-պրոտեկցիայի տակ գործում է Հայամերիկեան խորհուրդը, որի վերջին երկու աշխատանքներն են Արցախի անկախութեան ճանաչումը Լուիզիանայի եւ Գալիֆօրնիայի խորհրդարանների կողմից: Այնտեղ, որտեղ գործում է Հնչակեան կուսակցութիւնը, կան լոբբիստական կազմակերպութիւններ՝ Աւստրալիայից մինչեւ Ֆրանսա, Ռուսականացից մինչեւ Ֆրանսա, Ռուսականացից մինչեւ Միացեալ Նահանգները եւ Լիբանան: ՄԳՂԿ-ն Սփիւռքի առաջամարտ եւ կարեւոր բաղկացուցիչներն են...

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻՆ ՄՈԳԱԿԱՆ ՈՒԺԸ

ԱՆԻ ԹՈՐԱՆՆԱՆ

Մաքառու մեներով հարուստ ճամբայ յաղթահարած է հայ ժողովուրդը: Դարերու ընթացքին շատ բան փոխուած է, շատ ջուրեր հոսած են, սակայն մեծ հաշուով, ռազմական ուժի, երկրապահ գիտությունի, գիր ու տառի եւ արուեստի նկատմամբ անոր ակնածանքն ու պաշտամունքը չեն փոխուած: Ինչպէս ամէնուր, այս բնագաւառն ալ անշուշտ իր նահանջներն ու յաղթանակները ապրած է. "Ոսկէ Դար" եղած է, նաեւ գիտական շունդալից նուաճումներ:

Մեր օրերը, անշուշտ, կարելի չէ որպէս նահանջ կամ յետընթաց բնութագրել: Այսօր ալ կան եւ մեր կողքին կ'ապրին ու կը ստեղծագործեն այն բանաստեղծներն ու գրողները, նկարիչներն ու երաժիշտները, որոնք վաղը իրենց արժանի տեղը պիտի գրաւեն հայ մշակույթի փառքի տաճարին մէջ: Յաւօք, մարդուն իր արմատներէն եւ ընդհանրապէս հոգեւորէն հեռացնելու համաշխարհային համահարթեցումի գործընթացը հետզհետէ աւելի ու աւելի դժուարանցանելի կը դարձնէ ճշմարիտ ու մեծ արուեստին մերձենալու ճամբաները:

Սակայն դժուարանցանելին անանցանելին չէ բնաւ: Առհասարակ դժուարը՝ բոլոր ժամանակներուն կը վերաբերի: Տարբեր եղած են

խանգարող երեւոյթները՝ գրաքննութիւն, հաւատաքննութիւն, կայսերապաշտական տարատեսակ նկրտումներ, արտաքին ու ներքին պարտադրանքներ...

Հիմա "խօսքի ազատութիւն" անուան տակ մամուլէն ու բեմերէն, համակարգչային տարատեսակ անկառավարելի ու գայթակղիչ ցանցերէն օրնիբուն մատուցող գոհակաբանութիւնը մարդը ա'լ աւելի կը հեռացնէ ճշմարիտ մշակույթէն, վեհ, ազնիւ ու հոգեւորէն, որ համահարթեցումի տանող ամէնէն կարճ ուղին է:

Միաժամանակ ճշմարիտ մշակույթը այն կախարդական բանալին է, որուն միջոցով նուիրուած հնագէտները, պատմաբաններն ու մատենագիրները խորամուխ կ'ըլլան պատմութեան անթափանց շերտերուն մէջ, բացայայտելով ու վերծանելով այն անհամար գաղտնիքներն ու առեղծուածները, որոնք ինչ-ինչ պատճառներով թաղուած էին մարդկային պատմութեան խորքերուն մէջ:

Կիրիկեան Հայաստանի անկրկնելի մշակույթը, առաւելաբար մանրանկարչութիւնը, վերոնշեալին լաւագոյն ապացոյցը կը հանդիսանան:

Այսօր, Կիրիկեան Հայաստանի զարմանահրաշ պատմութեան մէջ նորանոր գաղտնիքներ կը բացառուին...: Կիրիկեան Առաջաւոր

Ասիոյ հնագոյն երկիրներէն է, ուր ստեղծուած մշակույթը հնագոյն քաղաքակրթութեան անբաժանելի մասն է: Այստեղ յայտնաբերուած մշակութային, նիւթական եւ հոգեւոր արժէքներուն հետքերը մինչեւ Ք.Ա. 6-5-րդ հազարամեակ կը հասնին:

Ուսումնասիրողները (Ճ. Փարչ, Է. Մարքուարթ, Յ. Մանանդեան) Կիրիկեան արիական հնագոյն տարածք կը սեպեն: Անոնք Հոմերոսի "Իլիական"-ին մէջ յիշատակուած հրաբուխներու երկիրը՝ Արիմայիսը, Կիրիկիոյ Արգոս (այժմ Էրճիաս) լեռան շրջակայքին մէջ կը տեղադրեն, իսկ հոն ապրող արիները կը նոյնացնեն արմէններուն (արիներ) հետ:

Յիշենք, որ Պղատոնի հերոսներէն մէկը՝ Էր Արմենիոսը, նոյնպէս Կիրիկիայէն էր:

Կիրիկիան աշխարհագրականօրէն Հայկական լեռնաշխարհէն դուրս է, բայց ոչ հնագոյն Հայաստանի սահմաններէն եւ միշտ հայկական մշակութային ուղեծիրուն մէջ եղած է: Այս առումով Կիրիկիոյ պատմութիւնը Հայաստանի պատմութեան անբաժանելի մասն է:

Կիրիկիան ու անոր պատմութիւնը սիրելի ու հարազատ է իւրաքանչիւր հայու, հետեւաբար մեր դիմաց հարցադրումներ կը ծառանան. արդեօք հայութեան սէրը, նուիրումը եւ այդ տարածքին վրայ մեր հառաքելի պատահական եղած է... կրնա՞յ պատահական

ըլլալ Կիրիկիոյ հայկական թագաւորութեան ստեղծումը 1080-ին, նոյն այդ տարածքին հայկական ինքնուրոյն պետութեան ստեղծման նախադէպ եղա՞ծ է... եւ վերջին հաշուով պատահական է արդեօք աշխարհասփիւռ հայութեան մեծ սէրն ու հոգեւոր կապը, նոյնացումը Կիրիկիոյ մշակույթին հետ... Ասոնք հարցեր են, որոնց պատասխանը, թէեւ ուշացումով, սակայն ինք պատմութիւնը կու տայ, իսկ այդ մանրամասնութիւններուն մենք առաջին իսկ յարմար առիթով կ'անդրադառնանք:

Կիրիկիոյ պատմութեամբ զբաղող գիտնականները գլխաւորաբար ուշադրութիւն դարձուցած են կիրիկեան հայկական թագաւորութեան ստեղծման պատմութեան եւ անտեսած կամ հարեւանցի անդրադարձած են հնագոյն շրջանին:

Մինչդեռ ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ շատ կարեւոր է Կիրիկիոյ պատմութեան, յատկապէս հնագոյն շրջանը: Հնագիտական պեղումներու ընթացքին յայտնաբերուած նիւթական ու հոգեւոր մշակութային արժէքները կը վկայեն, որ Կիրիկիան ու անոր պատմութիւնը հնագոյն ժամանակներէն ի վեր սերտօրէն կապուած էին Հայաստանի ու Հայկական լեռնաշխարհի հետ: Անդրադառնանք վերը բարձրաց ուած հարցադրումներուն եւ փորձենք նորովի պատասխանել ինչպէս այդ, այնպէս ալ կարգ մը այլ հարցերու:

«ՀԲԸՄ ՀԱՅ ԿԻՆ»Ի ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՄ

Մարտնակուած էջ 14-էն

հայութեան ինքնութեան մասին շփոթ կը յառաջացնէ եւ յաճախ ընտանեկան բռնութեան տեղի կու տայ: Ան իր փորձառութեան ընդմէջէն հաստատեց, թէ անհրաժեշտ է վերջ դնել կանանց հանդէպ խտրական վերաբերումին, յարգել անոնց ազատութիւնը, միաժամանակ մշակել ազգային ավանդներու յստակ եւ անժամանցելի ուղեգիծ մը:

Վերջին խօսք առնողն էր Շնորհք քհնյ. Տէմիրճեանը, Վեն Նայսի հայոց Սուրբ Պետրոս եկեղեցւոյ հոգեւոր հովիւը: Քրիստոնէութեան սկզբունքներու հիման վրայ բազմաթիւ օրինակներ տալով՝ ան դատապարտեց ընտրովի վիժումները եւ տղայ զաւակներու վայելած նախապատուութիւնը: Միւս կողմէ, ան շեշտեց մարդկա-

յին կեանքի սրբութիւնը եւ սեռերու հաւասարութիւնը: Այս տեսակէտէն կարեւոր նկատեց եկեղեցւոյ զօրակցութիւնը՝ հոգեւոր դաստիարակութեան եւ ազգային արժէքներու հիմնաւորման գծով, որպէսզի հայութեան վերանորոգման սպառնացող յաճախակի եւ ընտրովի վիժումներու վտանգաւոր գարգացումներուն առաջը առնուի:

Բանախօսներու ելոյթներուն յաջորդեց ազգային եւ ընկերային հարցերու գծով միտքերու աշխոյժ փոխանակում, ուր տիրական էին հայութեան թիւի նուազման տագնապը, կանանց հանդէպ խտրական վերաբերումի վերացումը, յաճախակի վիժումները արգիլող ընտանեկան ծրագրումի անհրաժեշտութիւնը եւ այս բոլորին գծով հայրենի պետական եւ համահայկական հասարակական կազմակերպութիւններու գործակցութիւնը:

ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ

Մարտնակուած էջ 14-էն

իսկ մարդ-արարածինը այդպէս չի, շատ տուեցիր դու կը սպառուես, կոտոր կ'ընկնես:

-Բայց հաւանաբար դու էլ լսած կը լինես, ժողովրդական առածն ասում է՝ ինչ որ մաքուր սրտով տուեցիր, հազար պատիկը կը ստանաս, ասում են՝ Հաթամէ Թաին ինչ տալիս էր, տեղն աւելի շատ էր լցւում:

-Ես սրանք անհաւատութիւն եմ համարում:

-Այդ քո գիտնալիքն է, բայց մենք նիւթից շեղուեցինք, իմ բանաձեւում բարեկամի նկատմամբ սա է, անհատի նկատմամբ բարեկամ լինել, նշանակում է ծառայել նրա հօրացման եւ բարգաւաճման նպատակներին համար, բարեկամ ունենալը պատիւ չի բերում, այլ՝ բարեկամ դառնալը:

Վարոսի մեկնաբանութիւնը տարօրինակ հնչեց իմ ականջներին, անմիջապէս անհասկանալի որակեցի ասելով.

-Այս իմ ուղեղումս չի տեղաւորուում, թէ ինչպէ՞ս կարելի է, բարեկամ ունենալը պատիւ չբերի:

-Դեհ լսիր, ինչ եմ ասում, եթէ բարեկամներ ունես, նորէն կարող ես բարեկամներ ունենալ քո անցեալի բարի արարքների, անկեղծ ու անապասելիք օգնութիւնների շնորհիւ, քո արածներդ եկեղեցւոյ զանգերի ղողանջի պէս տարածուած են եւ նոր բարեկամներ են քո շուրջը

հաւաքում:

Բացատրութիւնը ինձ թուաց գոհացուցիչ եւ չառարկեցի մի այլ նիւթ առաջ քաշելով.

-Բա ի՞նչ կ'ասես ազգականի եւ հարազատի մասին:

-Թող նախ ազգական տերմինը բացատրեմ, ըստ բառարաններում եկած բացատրութեան՝ ազգական նշանակում է՝ արիւնակից, մէկ ընտանիքից սերունած անդամների շառաւիղը՝ սերունդը, որի հաւաքական ամբողջութիւնը գերդաստան կամ տոհմ է կոչւում:

-Շատ լաւ, հասկանալի է, ինձ ասա, ի՞նչ պարտականութիւններ ունեն ազգականները իրար նկատմամբ:

-Պարզ է, նրանք իրար պէտք է անշահախնդիր սիրեն, յարգեն եւ օգտակար լինեն, ազգականական կապը որքան ամուր լինի, կեանքը այդքան քաղցր ու հաճելի կը լինի:

-Ես ևլ քո հետ համաձայն եմ, դէհ որ այդպէս է, թող իւրաքանչիւր հայ մարդ ջանայ իր ազգականական կապերը ջերմացնել:

Մեկնելու ցանկութիւն առաջացաւ, դեռ հարցեր շատ կային, սակայն յոգնած չորս պատերի կիսալոյս մթնոլորտի մէջ դուրս եկանք, արեւը շարունակում էր իր խայտանքը լուրթ երկնակամարի գոգում, երբ ցտեսութիւն ասելով բաժանուեցինք դարձեալ հանդիպելու յոյսով:

«ՆԵՐՅԱՅԵՑՈՒՄ»

Մարտնակուած էջ 15-էն

«Գառնիի ձորում» նկարը սուր անկեան պրիզմայով դիտելիս անձանաչելի փոխուած է՝ ուղղաձիգ, դեղնակարմրաւուն ժայռերը ասես գահավիժում՝ պատկերի շարժումը զգայելի են դարձնում:

Յակոբեանի ձեռագրի այսպէս ասած միւս երեսը՝ մանեկներին, հագուստների, կտրող գործիքների աշխարհը նկարչի մտասեւեռումներին, խոհերին, գաղափարների մէկ այլ արտայայտչամիջոցներ են՝ կեանքային տարբեր իրավիճակներ, երեւոյթներ պատկերող մետաֆորներ՝ օժտուած զգայական նոյն յատկանիշներով («Գթասարտութիւն», «Գիշեր եւ ցերեկ», «Պայքար» «Գայթակղութիւն»): Կեանքի ուշ շրջանում Վարպետի

ստեղծած «Սիրոյ պարտէզ» նկարաշարը վերադարձ է հոգու գեղեցկութեան նախնական վիճակին, այստեղ նախորդ շրջանի սրածայր իրերի ազդեցութիւնը նահանջում, տեղի է տալիս աշխարհը հաստատուն պահող զգացումի առաջ, երբ հոգու պարտէզում ծաղկում էր սիրոյ երանութեան ծառը: Այս պատմութիւնը շարունակութիւն է ստանում գեղարուեստական մտածողութեան բոլորովին տարբեր, նոր ձեւի մէջ: Արուեստակից իր «խաղընկերների»՝ արհեստաւորական մետաղէ գործիքների անխաբար իր անձանաչելիութիւնն յետաքրքրական, անհրապույր աշխարհը նա անձանաչելիութիւնն յետաքրքրում է՝ կեանքի վերջին տարիներին անցնելով քանդակի ձեւերին, որի՝ միայն իրեն յայտնի լեզուով դրանց վերափոխում, վե-

րակերտում, զարմանալի կերպարներ է ստեղծում: Երեւակայութիւն ու հնարամտութիւն է պէտք նման իրերից արուեստի այսպիսի աշխարհ ստանալու համար, որտեղ մարդկային զգացումն ու ապրումը նոյն հազորդականութիւնն ունեն, ուր կեանքը դարձեալ ծաւալում է

բազմազանութեան ու գունաձեւութեան «գաղտնարաններում»:

Յուցահանդէսի անակնկալը Յակոբ Յակոբեանի «Նարեկացին» էր՝ սրբապատկերի հեղութեամբ ու աղօթքի խոնարհութեամբ մակագիր մի նկար, որպէս մագաղաթէ ձեռագիր մատենանի էջ...